

Օ՛, խաղատուն դարձած
հայրենական մեր տուն...

Սիլվա Կապուտիկյան

Սյունյաց Երկիր

www.syuniacyerkir.am



Քաջարանում վարչապետը սպվերը ջրի երե՛ս է հանել

Հրապարակի վրա է առաջին հազար խոշոր հարկատուների ցուցակը 2018թ. երկրորդ եռամսյակի արդյունքներով:

Ըստ այդ ցուցակի «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերությունը վերադարձել է առաջին հորիզոնական կիսամյակում պետական բյուջե վճարելով 24.6 մլրդ դրամ հարկ:

Տարվա առաջին եռամսյակում կոմբինատը վճարել էր 4.1 մլրդ դրամ հարկ: Իսկ երկրորդ եռամսյակում՝ միանգամից 20.5 մլրդ դրամի արժեքով:

Իհարկե, հրաշալի է, հաճելի է, եւ ողջունում ենք, սակայն...

Վերջին շրջանում արտադրության ծավալները նույնն են, ինչ 2017 եւ 2016 թվականներին (ըստ պաշտոնական տվյալների՝ վերամշակված հանքաքարի ծավալը 2017-ին կազմել է 18.864.000 տոննա):

Վերջին ամիսներին պղնձի գները գունավոր մետաղների միջազգային բորսայում նահանջել են, իսկ մոլիբդենի գինը ս.թ. մարտից բարձրացել է մոտ 1.5 անգամ:

Այսինքն շուկայում եւ արտադրության մեջ տեղի չեն ունեցել էական, նշանակալից այնպիսի փոփոխություններ, որ կարող էին հանգեցնել վճարվող հարկերի թռիչքային մոտ 5 անգամ աճին. 20.5 մլրդ դրամ արժեքով մեկ եռամսյակում...

Որպեսզի հասկանալի լինի թռիչքի բարձրությունը, հիշեցնենք...

2013 թվականին, երբ ընկերությունը ղեկավարում էր Մաքսիմ Հակոբյանը, պետությանը մեկ տարում վճարվեց մոտ 38 մլրդ դրամ հարկ:

Գաղութարարների գալուց հետո վճարվող հարկը խայտառակ չափով նվազեց, թեև գույքահեռաբար տեղի էր ունենում հանքաքարի արդյունահանման եւ վերամշակման արժեք:

2016 թվականին (տարվա արդյունքով) պետությանը վճարվեց 9.1 մլրդ դրամ հարկ:

Հիմա ոգեւորությունը՝ ոգեւորություն, բայց մի հարց, այնուամենայնիվ, մնում է չափազանցված:

Եթե հնարավոր էր մեկ եռամսյակում վճարել 20.5 մլրդ դրամ հարկ, ապա ինչո՞ւ նախկինում մի ամբողջ տարում (2016թ.) վճարվել է 9.1 մլրդ դրամ, իսկ 2017-ին՝ 18.6 մլրդ դրամ: Կա՞ մեկը, որ կարող է բացատրություն տալ հանրությանը հետաքրքրող այդ հարցին:

Մինչ այդ, սակայն, չենք կարող շնորհակալություն չհայտնել Հայաստանի Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանին, ով կարողացավ ստիպել «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲ ընկերության ղեկավարներին ու ծափված սեփականատերերին 2018-ի երկրորդ եռամսյակում պետությանը վճարելու 20.5 մլրդ դրամ ավելի հարկ, քան նույն տարվա առաջին եռամսյակում:

Հավատում ենք, որ այսուհետ նույնպես պետության հասանելիքը կտրվի պետությանը...

«Սյունյաց երկիր»

Առեղծված. նոր իշխանությունը (հնին հանգույն) չի՞ ուզում գնահատական տալ Վահե անօրենի սյունիքյան գործողություններին

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանին. հաղորդում հանցագործության մասին

Մեծարգո պարոն Փաշինյան
Հիմք ընդունելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասը՝ ներկայացնում եմ սույն հանցագործության մասին հաղորդումն ըստ ներքոշարադրյալի:

«Սյունյաց երկիր» թերթի խմբագրությանում առկա նյութերը հիմք են տալիս ենթա-

դրելու, որ Սյունիքի մարզպետ Վահե Ալբերտի Հակոբյանի կողմից կատարվել են մի շարք հանցագործություններ, որոնց ուսումնասիրությունը գտնվում է ՀՀ ԱԱԾ քննչական վարչության իրավասության ներքո:

Մասնավորապես, թերթի խմբագրություն տվյալներ են ստացվել հետևյալ փաստական հանգամանքների մասին:

1. Վահե Հակոբյանը Սյունիքի մարզպետի պաշտոնը ստանձնել է 2016թ. հոկտեմբերի 6-ին, որից հետո՝ 2017 թվականին, նրա կողմից էլիզաբեթ Պետրոսյանի աշխատավարձային եկամուտների չափը, համաձայն վերջինիս կողմից ներկայացված հայտարարագրերում առկա տվյալների, ավելացել է 94,866,608

էջ 6

ԶՊՄԿ-ի համար ցանկանում են փոխել Քաջարանի 339 հեկտար հողերի կապեգործիաները

Հունիսի 25-ին Սյունիքի մարզի Քաջարան խոշորացված համայնքի ավագանին հավանություն է տվել, որ իր կազմի մեջ մտնող Քաջարան քաղաքի եւ Լեռնաձոր գյուղի 339 հեկտար հողերի կատեգորիաների փոփոխություններ նախատեսվեն: Սա նշանակում է, որ ավագանին կողմ է հողերի կատեգորիաները փոխելու գործընթացին, սակայն դա բավականին երկար պրոցես է:

Վերջնարդյունքում երկու բնակավայրի տարածքներում գտնվող պետական եւ համայնքային հողակտորները՝ արդեն որպես արդյունաբերական հողեր, օգտագործման նպատակով պետք է հանձնվեն Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատին: Հենց ԶՊՄԿ-ն է դիմել համայնքապետարան, իսկ

համայնքի ղեկավար Մանվել Փարամազյանն էլ որոշման նախագիծ է ներկայացրել ավագանու ներկա 10 անդամի քննարկմանը, որոնք միաձայն կողմ են քվեարկել:

Գյուղատնտեսական, բնակավայրերի, անտառային ու ջրային հողերը դառնալու են արդյունաբերական

Այսպիսով՝ խոշորացված համայնքի ավագանին դեմ չէ, որ փոխվեն Քաջարան քաղաքի 308 հա (այդ թվում՝ 146 հա պետական եւ 162 հա համայնքային) հողերի կատեգորիաները: Դրանք գյուղատնտեսական, անտառային, բնակավայրերի եւ ջրային նշանակության հողեր են, որոնք իրենց հերթին ներառում են արտոներ, վարելահողեր,

էջ 7



Մանվել Փարամազյան, Քաջարանի համայնքապետ



Ռոբերտ Քոչարյանի կալանավորումը երկփեղկեղ է հայ հանրությունը

Ըստ Արմենպրեսի՝ 2008թ. մարտի 1-ից 2-ն ընկած ժամանակահատվածում Երեւան քաղաքում տեղի ունեցած իրադարձությունների վերաբերյալ ՀՀ հատուկ քննչական ծառայությունում քննվող քրեական գործով նախաքննության ընթացքում ձեռք բերված ապացույցների բավարար համակցության հիման վրա 2018թ. հունիսի 26-ին ՀՀ պաշտոնաթող նախագահ Ռոբերտ Քոչարյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-ին հոդվածի 1-ին մասով այն բանի համար, որ նա այլ անձանց հետ նախնական համաձայնությամբ տապալել է ՀՀ սահմանադրական կարգը:

Մեր կարծիքով ընդհանուր իրավասության դատարանը հունիսի 27-ին որոշում է կայացրել երկու ամսով կալանավորելու ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանին: Վերջինիս պաշտպանները երկու անգամ հրավիրել են մամուլի ասուլիս եւ հանրությանը մեղադրանքով բազում հակափաստարկներ: Հունիսի 27-ին ՀՀ Պաշտպանի գերագույն մարմինը հայտարարություն է տարածել Ռոբերտ Քոչարյանի դեմ մեղադրանք մերկայացնելու առնչությամբ: Քաղաքական այդ ուժը խիստ կարեւոր է, որ բոլոր գործընթացները տեղի ունենան իրավական հարթության վրա՝ օրենքի տառին ու ոգուն համապատասխան: Ռոբերտ Քոչարյանի դեմ մեղադրանքով մեղադրանքի ու նրան կալանավորելու առնչությամբ հայտարարություն է տարածել Աժ ՀՀ պաշտպանությանը՝ օրինականության տեսակետից խնդրահարույց անվանելով քրեական գործը: Ռոբերտ Քոչարյանի խափանման միջոցը փոխելու համար ստորագրահավաք են իրականացրել Աժ պատգամավորները. ստորագրահավաքին միացել է 46 պատգամավոր: Արցախի Հանրապետության Աժ մի խումբ

պատգամավորներ եւս օգոստոսի 7-ին միջնորդություն-խնդրագիր են ներկայացրել ՀՀ զլխավոր դատախազին՝ Ռ. Քոչարյանի խափանման միջոց կալանավորումը փոխելու համար: ՀՀ զլխավոր դատախազությունը, սակայն, օգոստոսի 8-ին մերժել է պատգամավորների միջնորդությունը: ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի խափանման միջոց կալանավորումը փոխելու վերաբերյալ վերաքննիչ բողոքը քննվել է օգոստոսի 9-ին: Օգոստոսի 13-ին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից բավարարվել է ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու առաջին ատյանի դատարանի որոշման դեմ պաշտպանների բողոքը:

Ոստիկանապետն աշխարհաքային այց է կատարել Սյունիքի, մարզ



Ոստիկանության պետը պահանջեց անհանդուրժող լինել հանցագործությունները գրանցումից թաքցնելու, քաղաքացու հանդեպ անպատշաճ վերաբերմունքի եւ ցանկացած այլ արատավոր երեւոյթների հանդեպ, ինչպես եւ լիարժեք աշխատել համայնքների, հասարակության հետ: Շեշտելով ոստիկանության յուրաքանչյուր ծառայողի անձնական պատասխանատվությունը մոր Հայաստանում մոր ոստիկանության ծեսավորման գործում՝ Վալերի Օսիպյանն ընդգծեց ոստիկանության հանդեպ հասարակության վստահության եւ հարգանքի նշանակությունը, ինչի գրավականն էլ անկաշառ, պետական մտածողությամբ պրոֆեսիոնալ ոստիկանն է: Ոստիկանության պետը խորհրդակցության մասնակիցներին կոնկրետ հանձնարարականներ տվեց հատկապես ուշադրությունը կենտրոնացնել ծանր եւ առանձնապես ծանր հանցագործությունների բացահայտմանը, ապօրինի պահվող զենք-զինամթերքի հայտնաբերման, թմրամիջոցների անօրինական շրջանառության եւ բնակարանային գողությունների արագ բացահայտմանը: Վալերի Օսիպյանը նշեց, որ ուշադրություն կենտրոնանում պահվեն նաեւ նախկինում կատարված հանցագործությունները, անկախ դրանց վաղեմությունից: Խորհրդակցության ավարտին ոստիկանության պետի հրամանով Սյունիքի մարզի մի խումբ ոստիկաններ պարզեատրվեցին ոստիկանության հերթական կոչումներով, պատվոգրերով, մեդալներով, կրծքանշաններով եւ հուշանվերներով:

Օգոստոսի 1-ին ոստիկանության պետ Վալերի Օսիպյանը մարզային այցելությունների ծրագրով Սյունիքի մարզում էր եւ աշխատանքային հանդիպումներ ունեցավ ոստիկանության մարզային վարչությունում ու մարզպետարանում: Ինչպես «Արմենպրես»-ին տեղեկացրին ՀՀ ոստիկանության հասարակայնության հետ կապերի եւ լրատվության վարչությունից, ոստիկանության Սյունիքի մարզային վարչության եւ ենթակա ստորաբաժանումների անձնակազմի հետ անցկացրած խորհրդակցության ընթացքում Վալերի Օսիպյանն անդրադարձավ 2018 թվականի առաջին կիսամյակում արձանագրված ցուցանիշներին: Առանձնացնելով որոշ հանցատեսակների բացահայտումների նվազումը՝ ոստիկանության պետը նշեց մի քանի օբյեկտիվ պատճառ, որոնց արդյունքում ցուցանիշների թվային պատկերը կարող էր այդպիսին լինել, բայց միևնույն ժամանակ ընդգծեց, որ չի հանդուրժի, եթե նույն պատկերը լինի տարվա 3-րդ եռամսյակի ամփոփմամբ:

Տեղ գյուղի բնակիչները պահանջում էին համայնքապետի հրաժարականը

Օգոստոսի 9-ին (ժամը 12-ից) Տեղ գյուղի բնակիչները փակել էին Գորիս-Ստեփանակերտ ավտոմայրուղին եւ պահանջում էին համայնքի ղեկավար Արթուր Շարունցի հրաժարականը: Հայաստանից Արցախ մեկնող եւ Արցախից մեր հանրապետություն ժամանող հարյուրավոր մեքենաներ կանգնած էին մնացել ճանապարհին: Հավաքվածները՝ մոտ հարյուր հոգի, պահանջում էին խոշորացված համայնքի ղեկավար Արթուր Շարունցի հրաժարականը: Համայնքի բնակիչները դժգոհ են նրա գործունեությունից: Ըստ Տեղ գյուղի բնակիչների համայնքում կուտակվել են բազմաթիվ հարցեր, որոնց լուծմամբ չի զբաղվում համայնքի ղեկավարը: Տեղ գյուղ է ժամանել Սյունիքի մարզպետ Կարեն Համբարձումյանը. նա բանակցել է ցուցարարների հետ՝ կոչ անելով բացել ճանապարհը, թույլ տալ վերականգնել երթևեկությունը: -Համայնքի ղեկավարը համայնքի բնակիչների կողմից ընտրված պաշտոնյա է, եւ հենց այնպես հնարավոր չէ պաշտոնանկ անել նրան. դա ենթադրում է որոշակի գործընթաց, ասել է թե՛ հենց հիմա չենք կարող քննարկել

նրա պաշտոնանկության հարցը,- հայտարարել է Կարեն Համբարձումյանը: Ըստ մարզպետի՝ ընթացիկ տարվա 4-րդ եռամսյակում համայնքապետարանում պլանային ստուգումներ են նախատեսված, ինչը հնարավորություն կտա առավել հիմնավոր պատկերացում կազմել համայնքապետարանի ֆինանսատնտեսական գործունեության մասին, եւ դրանից բխող եզրակացություններ անել: Մարզպետ Կարեն Համբարձումյանը եւ ցուցարարները, ի վերջո, ընդհանուր հայտարարի են եկել. Գորիս-Ստեփանակերտ մայրուղում ժամը 20-ին վերականգնվել է երթևեկությունը, իսկ Տեղ գյուղի բնակիչների նկատառումները կապված համայնքի ղեկավար Արթուր Շարունցի հետ, կքննարկվեն ամենայն պատշաճությամբ: Ցուցարարները մինչեւ վերջ պահանջել են Արթուր Շարունցին, սակայն նա այդպես էլ չի ներկայացրել համագյուղացիներին՝ մնալով անհասանելի: Գորիս-Ստեփանակերտ ավտոմայրուղին շրջափակած ցուցարարները միայն Տեղ գյուղի բնակիչներ էին: Ավարդ Մետրայան

Նախարար Սուրեն Պապիկյանը՝ Սյունիքում

Հունիսի 27-ին եւօրյա աշխատանքային այցով Սյունիքի մարզում գտնվող ՀՀ տարածքային կառավարման եւ զարգացման նախարար Սուրեն Պապիկյանը Կապանի համայնքապետարանի աշխատակազմին, ավագանու անդամներին եւ բնակավայրերի վարչական ղեկավարներին է ներկայացրել համայնքի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար Նարեկ Ղահրամանյանին:



Ողջունելով ներկաներին եւ շնորհավորելով Նարեկ Ղահրամանյանին պաշտոնում նշանակվելու կապակցությամբ՝ նախարար Սուրեն Պապիկյանը նշել է, որ ՀՀ տարբեր մարզերում եւ համայնքներում ձեռնարկված հանրային փոփոխությունների պահանջը թափանցում է հանրապետության գրեթե բոլոր ոլորտներ եւ իշխանությունների խնդիրն է ապահովել այդ գործընթացների սափուկ եւ հանգիստ կազմակերպումը: «Մենք պարտավոր ենք հաղթահարել այն տարածայնությունը, որ առկա է համայնքային բնակչության սպասումների եւ առկա իրավասու միջոց ու համատեղ ջանքերով հասնել համայնքների տնտեսական եւ սոցիալական բարեկեցությանը»,-ասել է նախարարը: Սուրեն Պապիկյանը եւս մեկ անգամ ընդգծել է, որ Հայաստանի կառավարության համար առանցքային նշանակություն ունի տարածքների համաչափ զարգացումն ու ապակենտրոնացումը եւ միաժամանակ հավելել, որ այս գործում չափազանց կարեւոր է մարզպետարանի, համայնքապետարանի եւ ավագանու անդամների համաձայնեցված ու արդյունավետ աշխատանքը: Նախարար Պապիկյանը համոզմունք է հայտնել, որ Նարեկ Ղահրամանյանը մեծ պատասխանատվությամբ ու պատվով կկատարի հանրապետության չորրորդ քաղաքի ղեկավարի իր պարտականությունները:

Կյանը լսել է համայնքապետարանի աշխատակազմին, ավագանու անդամներին եւ բնակավայրերի վարչական ղեկավարներին անհանգստացնող մտահոգությունները, պատասխանել նրանց հարցերին: ***

Իր խոսքում Սյունիքի մարզպետ Կարեն Համբարձումյանն, անդրադառնալով Կապանում առկա հիմնախնդիրներին եւ դրանց հնարավոր լուծման հեռանկարներին, կարեւորել է այդ գործում մարզային եւ համայնքային կառուցների փոխհամաձայնեցված աշխատանքը: Նարեկ Ղահրամանյանը շնորհակալություն է հայտնել ՀՀ վարչապետին Կապան համայնքի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատարի պատասխանատու պաշտոնն իրեն վստահելու համար եւ հավաստիացրել, որ համագործակցության, ակտիվ աշխատանքի եւ կապանցիների գործում աջակցության շնորհիվ հնարավոր կլինի երկրում արձանագրված դրական փոփոխություններն արագ հասցնել Կապան համայնք: Ավարտին նախարար Սուրեն Պապի-

Սուրեն Պապիկյանը հիշեցրել է, որ դեռեւս Արցախի Հանրապետություն կատարած այցի շրջանակներում ԱՀ պետնախարարի եւ ԱՀ գյուղատնտեսության նախարարի հետ պայմանավորվածություն եր ձեռք բերվել աշխատանքային քննարկում կազմակերպել վարչատարածքային բարեփոխումների շուրջ փորձի փոխանակման վերաբերյալ, ուստի, այդ քննարկումների հարթակ ընտրվեց Գորիս համայնքը՝ որպես առավել կայացած եւ երկու հանրապետությունների միջոց աշխարհագրորեն միջանկյալ գոտի: Հանդիպմանը ներկայացվել է Գորիսի փորձը, ձեռքբերումներն ու դրական արդյունքները: Արցախի պետնախարար Գրիգորի Մարտիրոսյանը շնորհակալություն է հայտնել նախարար Սուրեն Պապիկյանին՝ արցախյան կողմի խնդրանքին արագ արձագանքելու եւ համայնքների խոշորացման հայաստանյան փորձի վերաբերյալ նմանօրինակ քննարկում կազմակերպելու համար ու համոզմունք հայտնել, որ Արցախից ժամանած մասնագետների թիմը հիմնախնդիրները կապակցությամբ կարող էին լուծել: Քննարկման ավարտից հետո նախարար Սուրեն Պապիկյանը ներկա է գտնվել Վերին-Ակներ վերանորոգված կամրջի բացման հանդիսավոր արարողությանը: ՀՀ տարածքային կառավարման եւ զարգացման նախարարություն

Մաքսիմ Հակոբյան. «Մի բան պիտի հիշենք՝ այսօրվա օրը, վաղվա օրն աշխատանքով է լինելու, ուրիշ ճանապարհ չկա»

(Հատվածներ Մաքսիմ Հակոբյանի հարցազրույցներից, հոդվածներից, ելույթներից)

Ծնվել եմ բազմամյա ընտանիքում, 1949 թվականին, տասը երեխա էինք: Հայրս ծնողներին շուտ էր կորցրել, երեխաները համար որոշել էր շատ երեխաներ ունենալ: Ծնվել էր քահանայի ընտանիքում:

Ավարտել եմ Լեռնաձորի 8-ամյան ու Քաջարանի միջնակարգը, ընդունվել պոլիտեխնիկական ինստիտուտի լեռնային ֆակուլտետը, ապա անմիջապես աշխատանքի անցել ՁՊՄԿ-ում, սկսել եմ էքսկավատորի մեքենավարի օգնականից, անցել եմ համարյա բոլոր աստիճաններով: Կարճատև աշխատանքից, տեղամասի պետ, արտադրամասի գլխավոր ինժեներ, բաժնի պետ, կոմբինատի գլխավոր ինժեներ... 1998 թվականի մայիսից ղեկավարել եմ Չանգեզուրի պղնձամուլիբդենային կոմբինատը:

Անուսնացած եմ, ունեմ երկու զավակ:

... Ըստ էության բախտավորություն է եղել կոմբինատի համար, որ գրեթե ակունքներում ունեցել է այնպիսի մի ղեկավար, ինչպիսին Հմայր Սահակյանն էր: Ճանաչողների խոսքից, վերաբերմունքից պարզ երևում է, որ նրա անվան հետ պետք է կապել այսօր էլ այս մեծ ընտանիքի ներսում կենսունակ մնալուն արժեքների ամբողջ համակարգը: Եվ տաղանդավոր կազմակերպիչ, եւ մեծ մարդ. այդպես կարելի է բնորոշել նրան:

Չեռնարկության ինքնահաստատումի ու ճանաչման շրջանը կապվում է Ֆրունզե Պետրոսյանի անվան հետ: Դեռևս շատ երիտասարդ ստանձնելով կոմբինատի ղեկը, նա իրեն դրսևորել է որպես պետական մտածողությամբ օժտված մի անհատականություն, ով հետագայում զգալի ավանդ ունեցավ հատկապես Չեռնարկության պահպանման գործում:

Նույն այդ ընթացքում մի հատված տնօրեն աշխատեց Գեորգի Գասպարյանը, բայց հասցրեց ամուր հետք թողնել իր հետաքրքրական ծրագրերով: Մեծ ծրագրեր ուներ: Ցավոք, չհասցրեց...

Ռոմա Նավասարդյանի տնօրինության տարիները համընկնում են այսպես կոչված հեղափոխության արդյունքում ստեղծված նոր տնտեսական հարաբերությունների շրջանին: Նա կարողացավ ճիշտ կողմնորոշվել, դրսևորել իսկապես նոր մտածողություն ու նախաձեռնություն: Արդյունքում դրվեցին սկզբունքներ, որոնք դեռ երկար կաշխատեն: Նույն այդ սկզբունքների շնորհիվ էր նաև, որ Չեռնարկությունը պահպանվեց բառացիորեն ընդդեմ «ժամանակի թելադրանքի» եւ դեռ «ամխափան աշխատանքի նախադրյալներ ստեղծվեցին»:

... Այսօր կոմբինատը ներկայանում է իբրև մի տնտեսություն, որը մոտ 10000 մարդու աշխատանք է ապահովում (արբանյակ ձեռնարկությունների հետ միասին): Մենք անսակամ մոտ 45 միլիոն դրամ ենք փոխանցում կենսաթոշակային հիմ-

նադրամին: Պետության ամենախոշոր արտահանողներից ենք: Վերջնական արդյունքով արտահանվում է մեր ամբողջ արտադրանքը. 2001թ. թողարկել ենք 32 մլն դոլարին համարժեք արտադրանք: Ունենալով վերանշակող ձեռնարկություններ՝ այս թիվը կարող ենք բազմապատկել:

Ներքին կոոպերացիայի միջոցով աշխատատեղեր ստեղծելու լայն հնարավորություններ ունի ձեռնարկությունը. միայն 2001-ին 15 հարակից ձեռնարկություն ենք ստեղծել, որտեղ արտադրվում են այնպիսի սարքավորումներ եւ նյութեր, որոնք միշտ ներկրվել են արտերկրից:

«Սյունյաց աշխարհ», N 12-13 (50-51), 30 մայիսի 2002թ.

1989-ին «Չանգեզուրի պղնձամուլիբդենային կոմբինատ» ուներ 1669 աշխատող, այսօր՝ 2360:

Լուծում ենք սոցիալական բազմաթիվ հարցեր: Չեռնարկությունն ունի երկու մանկապարտեզ, ուր հաճախում են 150 երեխա, Երեւանի «Երեբունի», Քաջարանի, Կապանի հիվանդանոցների հետ ունենք պայմանագրեր կոմբինատի աշխատողների, նրանց ընտանիքի անդամների, ինչպես նաև կենսաթոշակառուների վերահաստատումներն անվճար կատարելու համար: Ունենք սեփական մարզահամալիր, մշակույթի պալատ, հովանավորում ենք «Սյունիքի գամերը» մանկապատանեկան ժամբարը:

Այս տարի 30 մլն ԱՄՆ դոլար է շրջանառվել հանրապետությունում կոմբինատի խողովակով: Վերջին մի քանի ամսվա ընթացքում մոտ 60 մեքենա է ավելացել Քաջարանում... Այս թվերի տակ մարդկանց, ընտանիքների ճակատագրեր են, արտագաղթի կամխում է, հեռացածների վերադարձ է հայրենի օջախներ:

... Թող կոպիտ չինչի. մեզանում ընդունված է «փող աշխատելու» գոեհիկ ձեւը՝ քանդելով, պարալիզելով, ավերելով, որը միայն անհատին է ձեռնտու, հասարակությանը վնաս: Այնինչ՝ արտադրություն կազմակերպելով եւ անհատն է շահում, եւ ձեռնարկությունը, եւ՝ հասարակությունը: Կառուցելով ավելի շատ փող կարելի է աշխատել: Մեկը հինգ ծառ կտրելով է փող աշխատում, մյուսը՝ տասը ծառ տնկելով: Խնդիրն այս հոգեբանությունը հաղթահարելու մեջ է:

... Հենվում ենք տեղական կարգերի վրա, օգտագործում նրանց ուժը: Բայց դրանով չենք բավարարվում: Որպեսզի խզում չառաջանա, հոգում ենք նաև նոր կարգերի մասին: Մասնագետներ ենք ուղարկել արտերկիր՝ վերապատրաստման, Կապանի կրթահամալիրում անհատական պայմանագրով վերապատրաստում ենք հարստացնողի մասնագիտությամբ կարգեր...

«Սյունյաց աշխարհ», N 5, 20 հոկտեմբերի 2000թ.

Սյունիք-Չանգեզուր աշխարհը միշտ եղել է մտում է հայոց անկախ պետականության պատվարը,

Շնորհավորանք Մաքսիմ Հակոբյանի ծննդյան օրվա կապակցությամբ

Օգոստոսի 8-ին Մաքսիմ Հակոբյանը դարձավ 69 տարեկան:

Նա, հիրավի, անկախության շրջանի ամենանշանավոր ու արժանապատիվ սյունեցիներից է, ուստի եւ պարտավորված ենք զգում շնորհավորել նրան ծննդյան հերթական տարեդարձի առթիվ ու բարեմաղթանքի խոսք հղել:

Մենք նրան նախելանաջ առողջություն ենք ցանկանում ու բարձրաձայնում երիցս ինքը եղել է մտնում է ընդօրինակման արժանի անձնավորություն հատկապես այն հարցում, թե ինչպես պետք է ծառայել երկրին ու հայրենի երկրամասին: Այն, ինչ նա արեց 1998-2014 թվականներին Սյունիքի համար, ուրիշներն այլևս չարեցին ու չեն անի մոտ ապագայում:

Ժամանակին նա լծվեց մի համդուզն, շիտակ, անսթեբեթ համապետական գործի, որի համար, ի վերջո, չներվեց:

Նա մեր ընդերքի ամենամեծ հարստությունը՝ Քաջարանի պղնձամուլիբդենային հանքավայրը, ծառայեցրեց հայոց անկախացած պետության հզորացմանը, ծառայեցրեց Սյունյաց աշխարհին՝ պետական բյուջեին տարեկան տալով մոտ 36 մլրդ դրամ (առայժմ չգերազանցված), Սյունիքի մարզին՝ մինչև 2 մլրդ դրամ, որը նույնպես չի գերազանցվել մինչև է հիմա:

Նա այնքան գրավիչ դարձրեց հանրապետության լեռնահանքային արդյունաբերության հսկա ձեռնարկությունը, Քաջարանը, մարզի ենթակառուցվածքները, որ ամեն տարի մի քանի տասնյակ միլիոն դոլարի ներդրում էր կատարվում երկրամասում, այն էլ՝ առանց աղմուկ- աղաղակի:

Եվ ազգանվեր այդ պահվածքը, ինչպես երևում է տարիների հեռվից, կասեցվեց:

Ու տկորների, գլխաբացների, ընչաբաղցների, թերուների շքերթիրականությունում, բնականաբար, նրա կարիքն այլևս չզգացվեց:

Հետո եկան զաղութարարները՝ մոնոլի, թաթարի կամ մորեխի պես, ինչպես մեր միջնադարում: Եկան ու փակեցին բոլոր այն ակունքները, որով Սյունիք ամբողջ էր սնվում, որի ուժով առավել կանգուն էր մեր երկրամասը:

... Հորս տարի է անցել, որ նա հետ է թաշվել, որ նրան հետ են պահել:

Բայց ժամանակի ընթացքում, նաև հետագայում տեղի ունեցածի համապատկերի վրա, նրա կերպարն



անընդհատ նորանում է, մարդու եւ երկրի քաղաքացու, կազմակերպչի նրա տեսակը դառնում առավել սպասված ու փնտրված:

Իշխանության համար պայքարի մեր օրերում դժվար թե գնահատվի նրա արած-դրածը, խարազանվի վերջին տարիներին նրա հանդեպ թույլ տրված սխալները: Ասել է թե՛ ժամանակը դեռ չի եկել...

Իսկ առայժմ մեծարժոց Մաքսիմ Հակոբյանին ուզում ենք ակնհայտ մի ճշմարտություն հիշեցնել՝ Դուք ամենաերջանիկ մարդկանցից մեկն եք մեզանում, որովհետեւ Ձեզ ծնող լեռնաշխարհը՝ Սյունիքը, Ձեզ գնահատում է ամենայն պատշաճությամբ, Ձեզ սիրում եւ կարոտում է այնպես, ինչպես այն օրերում, երբ հայրենական մեր տնտեսության դրոշակակիրն էիք, երբ ապրում էիք սյունեցիների հոգեբեր հնարավորինս թեթևացնելու ոչ դյուրին առաքելությամբ:

Ծնունդը շնորհավոր, Մաքսիմ Անուշավանի:

Թող ամենակարող Տերը Ձեզ պահապան լինի:

Սամվել Ալեքսանյան

Հ.Գ.

Մաքսիմ Անուշավանի Հակոբյան. ծնվել է 1949թ. օգոստոսի 8-ին Կապանի շրջանի Կերին Հանր գյուղում: Միջնակարգ ավարտելուց հետո սովորել է ավարտել է Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտի լեռնային ֆակուլտետում եւ բարձր առաջադիմությամբ ավարտել այն:

1972-ից աշխատել է Չանգեզուրի պղնձամուլիբդենայինում, սկզբում էքսկավատորավարի օգնական,

Լեոնիդ Գրիգորյանը՝ Սյունիքի մարզային փրկարարական վարչության պետ



ՀՀ ԱԻ նախարար Դրաշյա Ռոստոմյանի հրամանով օգոստոսի 3-ին Սյունիքի մարզային փրկարարական վարչության պետ է նշանակվել Լեոնիդ Գրիգորյանը:

Լեոնիդ Գրիգորյանը Արցախյան ազատամարտի ճանաչված մասնակիցներից է, հայոց ազգային բանակի ակունքներում կանգնած հրամանատարներից: Տեսական ժամանակ Կապանի զինվորական կոմիսարն էր:

Շնորհավորում ենք Լեոնիդ Գրիգորյանին եւ նրան մաղթում հաջողություններ պատասխանատու այդ պաշտոնում:

Արտյուշա Ղուկասյանը 60 տարեկան է

Լրացավ ճանաչված մեխանիկոս, ֆիզմաթ գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Գորիսի պետական համալսարանի ռեկտոր Արտյուշա Ապրեսի Ղուկասյանի ծննդյան 60-ամյակը:

Ծնվել է 1958 թվականի հուլիսի 30-ին Ստեփանակերտում: Միջնակարգ կրթություն ստացել է հայրենի Մեծ Են գյուղում եւ Մարտակերտում:

1975-1980թթ. սովորել է Երեւանի պետական համալսարանի մեխանիկամաթեմատիկական ֆակուլտետի մեխանիկայի բաժնում, որն ավարտելով ընդունվել է ՀԽՍՀ ԳԱ մեխանիկայի ինստիտուտի ասպիրանտուրան եւ գործուղվել Մոսկվա՝ ԽՍՀՄ ԳԱ մեխանիկայի պրոբլեմների ինստիտուտ: ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս Ն.Խ. Զարոբյանցյանի եւ ԽՍՀՄ ԳԱ ակադեմիկոս Ֆ.Լ.Չերնոուսկոյի ղեկավարությամբ ապագա գիտնականը զբաղվել է մահիպոլյացիոն ռոբոտների դինամիկայի եւ ղեկավարման խնդիրների ուսումնասիրությամբ:

1984 թվականին ԽՍՀՄ ԳԱ մեխանիկայի պրոբլեմների ինստիտուտի գիտական աստիճաններ շնորհող խորհրդում «Մանիպուլյացիոն ռոբոտների դինամիկայի ուսումնասիրությունում առածական հատկությունների հաշվառումով» թեմայով պաշտպանել է թեկնածուականատեղախոսություն, այնուհետեւ՝ 1996 - ին՝ դոկտորականատեղախոսություն՝ «Բացարձակ պինդ եւ առածական օղակներով մանիպուլյացիոն ռոբոտների շարժումների օպտիմիզացիա եւ ղեկավարում» թեմայով ու ստացել ֆիզմաթ գիտությունների դոկտորի գիտական աստիճան՝ «Ա.02.01 – տեսական մեխանիկա» մասնագիտությամբ:

1984-ից սկսվում է Ա.Ղուկասյանի գիտաաշխատանքային կենսագրությունը՝ ՀՀ ԳԱ մեխանիկայի ինստիտուտում, որտեղ որպես ավագ գիտաշխատող՝ ծավալում է ակտիվ թե՛ գիտական, թե՛ հասարակական աշխատանքներ: 1988-ին Ղուկասյանը հրավիրվում է աշխատելու Երեւանի պետական համալսարան, որտեղ տեսական մեխանիկայի ամբիոնում զբաղեցնում է նախ՝ դոցենտի, ապա՝ 1997-ից՝ պրոֆեսորի պաշտոնները:

1994-2002 թթ. ղեկավարել է ԵՊՀ-ի տեսական մեխանիկայի ամբիոնը:

2003թ.-ին Ա. Ղուկասյանին շնորհվել է պրոֆեսորի գիտական կոչում:

Ա.Ղուկասյանը գիտահետազոտական բեղմնավոր աշխատանք է կատարել մանիպուլյացիոն ռոբոտների մաթեմատիկական մոդելների կառուցման, կոնստրուկտիվ հատկությունների ուսումնասիրման եւ էլեկտրամեխանիկական ռոբոտների գործունեության համար օպտիմալ ռեժիմների մշակման բնագավառներում: Նա ուսումնասիրել է նաեւ առածական հատկությունների թռչող սարքերի մաթեմատիկական մոդելներ եւ մշակել ղեկավարման ալգորիթմներ: Ստացված գիտական արդյունքների հիման վրա գիտնականը կատարել է նաեւ արդյունաբերական մանիպուլյատորների կառուցվածքային էլեմենտների փորձնական հետազոտություններ:

Հետազոտությունների արդյունքները, որոնք ներդրվել են մանիպուլյացիոն ռոբոտների փորձնական մոդելների ուսումնասիրության ժամանակ, ունեն տեսական ու կիրառական մեծ նշանակություն:

Ա.Ղուկասյանի գիտական գործունեության արդյունքներն արտացոլվել են շուրջ 100 գիտական եւ ուսումնասիրողական աշխատանքներում, որոնք հրատարակվել են ՀՀ ակադեմիկական, նախկին միութենական եւ միջազգային գիտական հանդեսներում, գեկուցվել տեսական ու կիրառական մեխանիկայի խնդիրներին նվիրված բազմաթիվ գիտաժողովներում ու համագումարներում: Բավականին լայն աշխարհագրությամբ Ղուկասյանը մասնակցել է միջազգային գիտաժողովների աշխատանքներին (Մոսկվա, Սանկտ Պետերբուրգ, Կազան, Տաշքենդ, Օքսֆորդ, Հելսինկի):

Ա.Ղուկասյանը 1998-ից մինչեւ 2010թ. ղեկավարել է պետական բյուջեից ֆինանսավորվող գիտական թեմա, որի շրջանակներում կատարված կարելու գիտական հետազոտությունները հիմք են հանդիսացել ասպիրանտների ու հայտորդների համար: Պրոֆեսորը յոթ թեկնածուականատեղախոսության գիտա-



կան ղեկավար է եղել:

Նրա գիտական հետազոտություններն ուշադրության են արժանացել բազմաթիվ գիտնականների ու հետազոտողների կողմից, ովքեր իրենց աշխատություններում օգտագործել են ստացված արդյունքներն ու կատարել հղումներ:

Ղուկասյանն ակտիվ մասնակցություն է ցուցաբերել նաեւ գիտամանկավարժական գործընթացների կազմակերպման բնագավառում: Նրա անմիջական նախաձեռնությամբ 1995, 1997, 2002, 2006, 2010թթ. կազմակերպվել են մեխանիկական համակարգերի օպտիմալ ղեկավարման, կայունության ու ամրության ժամանակակից հարցերին, ինչպես նաեւ կրթության կազմակերպման արդի հիմնախնդիրներին նվիրված գիտաժողովներ, դարձյալ նրա նախաձեռնությամբ Երեւանի պետական համալսարանում ներդրվել է «Մանիպուլյացիոն ռոբոտների մեխանիկա եւ ղեկավարում» մասնագիտացման համակարգը:

Պրոֆեսոր Ա.Ղուկասյանը 2002-2010թթ. ղեկավարել է Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը:

Վարչական աշխատանքներին զուգահեռ այդ տարիներին զբաղվել է բարձրագույն դպրոցի կառավարման նոր տեխնոլոգիաների, ժամանակակից մանկավարժական կրթությանը ներկայացվող սոցիալ-հոգեբանական պահանջների, հայեցակարգային նոր մոտեցումների, բարձրագույն կրթության միջազգայնացման հիմնախնդիրներով, ինչպես նաեւ իրականացրել է դասախոսական ու գիտական գործունեություն:

2004-2007թթ. նախագահել է ՀՀ մանկավարժական բարձրագույն ուսումնական հաստատություններում բարեփոխումներ իրականացնելու, երկաստիճան ուսուցման համակարգին անցնելու, միասնական կրթական համակարգ ստեղծելու նպատակով ձեւավորված ուսումնասիրողական կորդինացիոն խորհուրդը եւ 2007թ.-ին նախաձեռնել ՀՀ մանկավարժական կրթություն իրականացնող բուհերի եւ շահագրգիռ կազմակերպությունների ղեկավարների կողմից «Միջազգային կոնսորցիում» հիմնադրման ստեղծելու մասին հուշագրի ստորագրումը:

Ա.Ղուկասյանը գիտական գործունեությանը զուգընթաց կատարել է կատարում է գիտակազմակերպչական մեծածավալ աշխատանք: 2003-2010թթ. ղեկավարել է ՀՀ ԲՈՒՀ-ի «020-Մանկավարժություն եւ հոգեբանություն» մասնագիտությամբ գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհուրդը (ՀՊՄՀ): 1998 թվականից ՀՀ ԲՈՒՀ-ի «047-Մեխանիկա» մասնագիտությամբ գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհուրդը (ՀՀ ԳԱ մեխանիկայի ինստիտուտ), 2012թ.-ից ՀՀ ԲՈՒՀ-ի «032 – կառավարման, ավտոմատացման եւ էլեկտրոնիկայի» (ՀԱՊՀ) մասնագիտություններով գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհուրդների անդամ է:

Նրա նախագահությամբ գործել են Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի «Գիտական տեղեկագիր», «Հայագիտական հանդես» պարբե-

րականների խմբագրական խորհուրդները: Անդամակցել է ՀՀ ԳԱ «Մեխանիկա» գիտական հանդեսի, ԼՂՀ «Կրթություն եւ գիտություն» Կրթախումբի հանդեսի խմբագրական խորհուրդներին: Այժմ Գորիսի պետական համալսարանում գիտական թեմայի շրջանակում լույս տեսնող «Սյունիք» հայագիտության հանդեսի խմբագրական խորհրդի նախագահն է:

Ա.Ղուկասյանը տեսական եւ կիրառական մեխանիկայի ազգային կոմիտեի անդամ է:

ՀՀ ճարտարագիտական ակադեմիայի անդամ է 2010 թվականից, ՀՀ Զանաչային խորհրդի անդամ եւ համեմատողիկ նախագահ՝ 2009 թվականից: Մոսկվայի քաղաքային մանկավարժական համալսարանի պատվավոր պրոֆեսոր է 2009-ից:

2010-2013թթ. եղել է ՀՀ Բարձրագույն որակավորման համեմատողիկ նախագահը:

2013թ.-ից մինչեւ 2016թ. փետրվար աշխատել է ՀՀ ԿԳՍ Կրթության ազգային ինստիտուտում՝ տնօրենի տեղակալ:

2016թ. փետրվարի 11-ին պրոֆեսոր Ա.Ղուկասյանը նշանակվել է Գորիսի պետական համալսարանի ռեկտորի պաշտոնակատար: Նույն թվականի հունիսի 9-ին ԳՊՀ խորհրդի նիստում միաձայն ընտրվել է Գորիսի պետական համալսարանի ռեկտոր:

Արտյուշա Ղուկասյանի պաշտոնավարման ընթացքում զգալի աշխատանքներ են կատարվել համալսարանի կառավարման համակարգի կատարելագործման, կառուցվածքային ստորաբաժանումների՝ արդիականության պահանջներից բխող փոփոխությունների, մասնագիտությունների վերալիցենզավորման, նոր մասնագիտությունների եւ մասնագիտացումների ներդրման, ուսումնական գործընթացի բարելավման, ներքին իրավական դաշտի կարգավորման, ֆինանսական կայունացման, բուհի միջազգայնացման եւ այլ ուղղություններով: Գրանցվել է համաչափ առաջընթաց բուհը ներկայացնող բոլոր բարձրիչներում (ուսումնասիրողական, գիտահետազոտական, ֆինանսատնտեսական, իրավական եւ այլն):

Ստեղծվել են նոր բաժիններ, վերակազմակերպվել են ֆակուլտետները, վերալիցենզավորվել են բոլոր մասնագիտությունները: Ներդրվել են նոր մասնագիտություններ (առկա կրթածեւում՝ «Անգլերեն լեզու եւ գրականություն», «Կերպարվեստ», «Իրավագիտություն», «Կառավարում (ըստ ոլորտի)», հեռակա կրթածեւում մագիստրոսական ծրագրով՝ «Հատուկ մանկավարժություն», «Ձրուսաշրջության կառավարում»), որոնց գծով առաջին անգամ ընդունելություն կատարվեց 2017-2018 ուստարում:

2016 թվականին Գորիսի պետական համալսարանն ունեցավ նոր լոգո (տարբերանշան), վերահիմնադրվեց պաշտոնաթերթը («Լրատու Գորիսի պետական համալսարանի»), ԳՊՀ-ն ունեցավ ժամանակակից մեդիա-չափանիշներին համապատասխանող նոր վեբ-կայք՝ www.gorsu.am:

Նոր ձեռքբերումներ արձանագրվեցին միջազգային համագործակցության ոլորտում: 2016-ին ԳՊՀ-ն Erasmus+ միջազգային

կրթական ծրագրի շրջանակներում մասնակցեց Erasmus+ LNSS («Գրադարանային ցանցի աջակցության ծառայություններ. Գրադարանների արդիականացում Հայաստանում, Մոլդովայում եւ Բելառուսում՝ գրադարանների անձնակազմի զարգացման եւ զրադարանային ծառայությունների բարեփոխումների միջոցով»), Erasmus+ Heritag (Բարձրագույն կրթության միջառարկայական բարեփոխումներ զբոսաշրջության կառավարման եւ երկրատեղեկատվության ոլորտների ուսումնակրթական ծրագիր) միջազգային ծրագրերին:

Կրթական այդ ծրագրերի շրջանակներում ԳՊՀ-ի համակարգողներն ու աշխատակիցները հանդիպումներ են ունենում եվրոպական մի շարք երկրների համալսարանների պրոֆեսորադասախոսական կազմի, գրադարանների աշխատակիցների հետ: Համալսարանում իրականացվել ու դեռեւս ընթացքի մեջ են գրադարանային գործի արդիականացմանն ուղղված դասընթացներն ու աշխատանքները: Ծրագրի արդյունքն է ԳՊՀ-ի վերանորոգված եւ ժամանակակից սարքավորումներով հագեցած ընթերցասրահը, որը ծառայում է ուսանողներին՝ ապահովելով նրանց ուսումնագիտական պահանջները:

Erasmus + HERITAG ծրագրի շրջանակներում կոնսորցիումի համագործակցող անդամ երկրների համալսարանների ներկայացուցիչների մասնակցությամբ վերջերս ԳՊՀ-ում բացվեց նաեւ Երկրատեղեկատվական համակարգերի (GIS) մասնագիտական լաբորատորիան, որը կարելու նշանակություն ունի նույն ծրագրի շրջանակում համալսարանում ներդրված «Ձրուսաշրջության կառավարում» մագիստրոսական կրթական ծրագրի հաջող իրականացման համար:

2017-ին լրացավ ԳՊՀ-ի հիմնադրման 50-ամյա հոբելյանը, որը լուրջ ստուգատես էր՝ ներկայացնելու բուհի կետադրյա գործունեության տարբեր փուլերի արդյունքը, ձեռքբերումներն ու հաջողությունները, կրթության եւ գիտության ոլորտներում ունեցած ավանդը եւ շարունակվող արժեքավոր ներդրումները: Ղուկասյանի նախագահությամբ նույն տարվա սկզբին մեկնարկված միջոցառումներն ամփոփվեցին 2017թ. հոկտեմբերին՝ նախ երկօրյա հանրապետական ուսանողական գիտաժողովի կազմակերպմամբ (հոկտեմբերի 5-6), որին մասնակցեց շուրջ 60 ուսանող ԳՊՀ եւ ՀՀ այլ բուհերից, ապա՝ Սյունիք կրթության եւ մշակույթի օջախ՝ խորագրով երկօրյա հանրապետական գիտաժողովի կազմակերպմամբ (հոկտեմբերի 19-20), որին մասնակցեցին շուրջ չորս տասնյակ գիտնականներ ու մասնագետներ ՀՀ եւ այլ երկրների գիտական ու գիտակրթական հաստատություններից:

Ա.Ղուկասյանի նախաձեռնությամբ համալսարանն ունեցավ օրինակ, որի խոսքերի հեղինակը այլուցի տաղանդաշատ բանաստեղծ Տիգրան Գրիգորյանն է, երաժշտության հեղինակը ՀՀ վաստակավոր գործիչ, ՀՊՄՀ պրոֆեսոր Արկադի Ենկունցը:

2017թ.-ից համալսարանում մեկնարկեց պետական ենթակառուցվածքային հավատարմագրման գործընթացը՝ համաձայն ՀՀ կառավարության 2011թ.-ի N 978-Ն որոշմանը ընդունված «ՀՀ-ում մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների եւ դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգի»: «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի հավատարմագրման հանձնաժողովի 2018 թվականի ապրիլի 12-ի N 26 որոշմամբ Գորիսի պետական համալսարանին շնորհվեց պայմանական ինստիտուցիոնալ հավատարմագրում 2 տարի ժամկետով:

Այժմ Ա.Ղուկասյանի ղեկավարությամբ ակտիվ աշխատանքներ են տարվում փորձագիտական հանձնաժողովի կողմից արձանագրված առկա թերությունների վերացման, հավատարմագրման հետագա գործընթացներում ԳՊՀ-ի առաջնահերթ անելիքների ուղղությամբ: Մշակման փուլում է համալսարանի 2018-2022 թթ. ռազմավարական



Մաքսիմ Յակոբյան. «Մի բան պիտի հիշենք՝ այսօրվա օրը, վաղվա օրն աշխատանքով է լինելու, ուրիշ ճանապարհ չկա»

Էջ 3
որովհետև մեր երկրամասը, պայմանավորված աշխարհագրական դիրքով ու պատմության գրեթե բոլոր հանգրվաններում խաղացած դերով, միշտ էլ առավել սրուքայնորեն է զգացել և զգում կայուն, հաստատուն ու հզոր պետության անհրաժեշտությունը:

«Այունյաց երկիր», N3 (139), 5 փետրվարի 2008թ.

Հայոց կենաց ծառը մնայուն է եղել նախելառաց հոգեւոր-մշակութային արմատներով: Եվ Հայաստան երկիրը ֆիզիկական ու աշխարհագրական հասկացություն չէ լուրջ, այլ՝ հոգու տարածություն:

«Այունյաց երկիր», N22-23 (158-159), 27 օգոստոսի 2008թ.

Ճշմարիտ ապրել ոչ բոլորին է հաջողվում, իսկ այդպես ապրել պետք է:

... Յուրաքանչյուր մասնագետի մեջ գնահատում են արհեստավարությունը: Հմուտ կոչակարն ինձ համար հազար անգամ ավելի հարգելի է, քան այն պաշտոնյան, թեկուզ էլ բարձրաստիճան, ով իր տեղում չէ: Մարդն իր տեղում պիտի լինի:

... Մարդ որտեղ էլ լինի, ինչ պաշտոն էլ զբաղեցնի, իրեն վստահված գործը պիտի անի ուժերի առավելագույն չափով, նվիրումով, անկեղծությամբ: Եվ ամեն մարդ՝ անհատ, տնտեսական ղեկավար, թե քաղաքական գործիչ, պիտի կարողանա միայն իր մասին չմտածել, այլ պետք է կա մի ժամանակ, երբ ե՛լ իրենից, ե՛լ իր բռնած գործից կհիսաբարկվեն:

... Ինչի՞ է մասն, որ մեր շրջապատում կան անճանալիություններ, որ չեն կարողանում բուժման գնալ կամ անապահով ընտանիքի ուսանող չի կարողանում ուսումը շարունակել: Եթե այս հարցերը լուծելու չեն նպաստում, ինչպե՞ս կարող են թե՛զ այս երկրի մասնիկը համարել:

«Այունյաց երկիր», N7 (119), 20 ապրիլի 2007թ.

Հանքարդյունաբերության ոլորտում ամենաշահավետ տարբերակն արտադրության բոլոր գործընթացները մինչեւ վերջ հանրապետությունում կազմակերպելն է: Եթե վերջին

տարիներին «Ձանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերությունը մոլիբդենի խտանյութն ամբողջությամբ արդեն մշակում է Հայաստանում, պղնձի խտանյութը դեռևս արտահանվում է: Եվ ահա այս հարցը լուծելու համար «Ձանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ն պատրաստվում է պղնձի վերամշակման ձեռնարկություն հիմնադրել:

«Այունյաց երկիր», N18 (154), 30 հունիսի 2008թ.

Մեր ժողովրդի բարոյական-քաղաքական-սոցիալական կացությունը, ներդաշնակ գոյատևումն ուղղակիորեն կախված է ընտանիքից, որում անգերազանցելի է կնոջ դերը: Անիրական կլինի խոսել ընտանիքի ամրապնդման, աճող սերնդի դաստիարակության մասին՝ մայրության եւ կանանց հարցերին չդարձնելով պատշաճ ուշադրություն:

...Մեր մայրերը, իբրեւ հայ օջախի ու ազգային նկարագրի պահպաններ, բացառիկ առաքելություն ունեն աճող սերնդի մոտ մեր ավանդույթները, բարքերը, արժեքային ամբողջ համակարգը պահպանելու եւ ամրապնդելու ճանապարհին, ինչը, անտարակույս, նաեւ իշխանության առաջնահերթ խնդիրն է:

«Այունյաց երկիր», N5 (117), 31 մարտի 2007թ.

Մենք կարելի խնդիր ունենք: Դա Սյունիքի մարզի հետագա ամրապնդումն է: Եվ Սյունիքը պետք է ամրապնդվի ոչ միայն այն պատճառով, որ հանրապետության հարավարևելյան սահմանն է, թեպետ դա շատ կարևոր ու անբննելի հանգամանք է: Մարզը բոլոր հիմքերն ունի դառնալու ավելի գրավիչ միջավայր ե՛լ ապրելու, ե՛լ արարելու ու ձեռնարկատիրությամբ զբաղվելու համար: Տարածաշրջանը բոլոր հիմքերն ունի մոտակա տարիներին հաղթահարելու եւ գործազրկության, ե՛լ աղքատության ներկա մակարդակը, որ մտահոգիչ է:

«Այունյաց երկիր», N21 (112), 30 դեկտեմբերի 2007թ.

Հանքարդյունաբերության մեջ գլխավոր

չափորոշիչը, կարծում են, բնապահպանական նորմերի պահպանումն է. բնօգտագործման ընթացքում չպետք է վնասել բնությունը: Եվ եթե չունենար արդյունահանման, վերամշակման, պղնձի ամբարան, շրջակա միջավայրի պահպանության արդիական տեխնոլոգիաներ, լուրջ տեխնածին հիմնախնդիրներ կառաջանան:

«Այունյաց երկիր», N2 (93), 26 հունվարի 2006թ.

Անընդհատ ժխտելու, ամեն ինչ մերժելու ճանապարհը չէ այն ուղին, որ երկիրը կտանի հզորացման, բարգավաճման, ժողովրդավարական արժեքների արմատավորման: Մեր այսօրվա համար, մեր ապագայի համար յուրաքանչյուրս ունենք մեր պատասխանատվության չափը, անելիքների մեր բաժինը: Տունը, որ Հայաստան է կոչվում, բոլորին է, եւ յուրաքանչյուրս պիտի տեր կանգնեք մեր բաժին պատասխանատվությանը: Մի բան պիտի հիշենք՝ այսօրվա օրը, վաղվա օրն աշխատանքով է լինելու, ուրիշ ճանապարհ չկա: Հայաստանը կերտվելու, դրվագվելու է յուրաքանչյուրիս աշխատանքով:

«Այունյաց երկիր», N1 (92), 3 հունվարի 2006թ.

Ի՞նչ կարող է ակնկալել ամեն մի մարդ նոր տարուց. նախելառաց նորացված Հոյս, նորացված Հավատ՝ գալիքի հանդեպ, երկրի ու նրա բռնած ճանապարհի հանդեպ, Սեր՝ իր հանդեպ, միմյանց հանդեպ, Համեղաշխություն, հաղադություն, Միաբանություն մեր պետականության շուրջ, Երջանկություն:

«Այունյաց երկիր», N1-2 (50-51), 1 հունվարի 2005թ.

Մի ճշմարտություն կա՝ մեր պատմության ընթացքում ավելի շատ գրի հաղթանակ ենք ունեցել, լույսի հաղթանակ: Ձեռքի հաղթանակներն անգամ դրանով էին պայմանավորված: Այսօր էլ պիտի ընտրել այնպիսի ճանապարհ, որ խոսքը, լուսավորությունը, իրապարակայնությունն ու բազմակարծությունը նպաստեն մեր պետության բարգավաճմանը, երկրի տնտեսական ուժի ռազմավար օգտա-

գործմանը, արարունի ոգու պահպանմանը:

... Ստեղծելը, կառուցելը մարդու ամենավեհ հատկանիշներն են: Շատ ավելի գնահատելի է, երբ մարդիկ կերտում են մտքի ու լույսի տաճար, հոգեւոր օջախ: Իհարկե, ժամանակը ցույց կտա, թե «Այունյաց երկիր» թերթի ստեղծագործական կազմին ինչքանով հաջողվեց կատարել սքանչելի այդ առաքելությունը: Սակայն, հավատացե՛ք, դա միայն թերթի խմբագրակազմի խնդիրը չպիտի համարել: Առանց ընթերցողի պահանջկոտ ու հավատավոր կեցվածքի, առանց հասարակության ջերմության ու հոգատարության չի կարող թերթը դառնալ յուրաքանչյուր սյունեցու ճշմարտախոս քիմքն ու ցանկալի գրուցակիցը, չի կարող լինել հոգեւոր Սյունիքի էական մաս, չի կարող լինել մարզի հասարակական-քաղաքական, հոգեւոր-մշակութային կյանքի հայելին:

«Այունյաց երկիր», N1 (1), 1 հոկտեմբերի 2003թ.

Մեր գերդաստանն իր մեջ շատ ավանդույթներ ունի պահած: Դրանցից մեկը սեփական քրտինքին ապավինելն է: Մյուսը՝ հարգանքն է եղել ու կա մարդկանց նկատմամբ, հակումը բարության հանդեպ:

... Մեր կյանքի խոցերից մեկը եղել ու մնում է գաղափարի ու իրական կյանքի անհաշտությունը, ծրագրի ու նրա գործարկության տարբերությունը: Դրա վերացմանը, կարծում են, կնպաստի գիտելիքի ու աշխատանքային փորձի մեկտեղումը:

... Առհասարակ քիչ սրբություններ չունի մարդ արարածը: Դրանցից մեկը, անկասկած, Հայրենիքն է, որ սկսվում է հայրենի գյուղից, քաղաքից, երկրամասից:

... Ինչո՞ւ չխոստովանել՝ մեզանում, նաեւ քաղաքականության մեջ կա աստիճանական սերնդափոխության կարիք:

«Այունյաց երկիր», N16-17 (24-25), 15 մայիսի 2004թ.

Մեղրին հայրենիք է մեզ համար, իսկ Ազարակի կոմբինատն այն կենարար երակն է, որ կամրապնդի այդ տարածաշրջանը:

«Այունյաց երկիր», N40-41 (48-49), 10 դեկտեմբերի 2004թ.

Ժրագիրը՝ դիմագրավելու ներկա ժամանակաշրջանում բուռի համար ոչ շահեկան մի շարք գործունեների ազդեցությանը, որոնց թվում են՝ ուսանողների թվաքանակի ու ֆինանսական ռեսուրսների նվազումը, աշխատակազմի թույլ մոտիվացիան պայմանավորված սոցիալական իրադրությամբ, երիտասարդ մասնագետների գիտական գործունեության ոչ գրավիչ դիրքը եւ այլն:

Ա.Դուկայանի ղեկավարությամբ ստեղծվել է ռազմավարության հարցերով զբաղվող հանձնաժողով՝ ռազմավարության ամբողջ առաջընթացը մշտադիտարկելու, խոչընդոտների մասին տեղեկացնելու, դրանց հաղթահարման ուղիները բացահայտելու, խնդիրների վերաանայման առաջարկություններ կատարելու համար:

Արդիականության պահանջներից բխող որակի ապահովումը շարունակական գործընթաց է եւ հանդիսանում է բուռի հիմնական գործառույթը:

Կրթության եւ գիտության բնագավառում ունեցած վաստակի, գիտական կարգերի պատրաստման եւ երիտասարդության կրթության ու դաստիարակության ասպարեզներում ներդրած ավանդի համար պրոֆեսոր Ա.Ա.Դուկայանն արժանացել է գնահատանքի՝

•ՀՀ ԿԳ նախարարության «Ոսկե հուշամեդալ» (2003),

•ՀՀ վարչապետի շնորհակալագիր (2003),

•«Ֆրիտոյֆ Եանսենի ոսկյա հուշամեդալ» (2005),

•Սոկրատեսի անվան միջազգային պարգև (Իսպանիա)՝ ժամանակակից հասարակության ինտելեկտուալ զարգացման գործում անձնական ներդրման համար (2006),

•Վիկտորյա թագուհու անվան միջազգային

պարգև (Մեծ Բրիտանիա)՝ պատվի, արժանապատվության եւ բարեխղճության համար (2006),

•«Ամանիա Շիրակացու անվան մեդալ» (2007),

•ՀՀ վարչապետի հուշամեդալ (2012),

•«Երախտագիտության մեդալ» (2013, ԼՂՀ),

•ՀՀ ՊՆ «Անդրանիկ Օզանյան» մեդալ (2009),

•ՀՀ Ոստիկանության «Համագործակցության ամրապնդման համար» մեդալ (2007),

•ԵՊՀ-ի հուշամեդալ (2007),

•Խ. Աբովյանի անվան հուշամեդալ (2008),

•Մանկավարժական համալսարանի հուշամեդալ (2012) եւ այլն:

Ա.Դուկայանն այսօր էլ երիտասարդական ակունով ու ջանասիրաբար շարունակում է իր գիտական բեղմնավոր գործունեությունը եւ լուրջ ներդրում անում ՀՀ կրթության եւ գիտության զարգացման գործում:

Ջերմորեն շնորհավորում ենք Գորիսի պետական համալսարանի ռեկտոր, մեծահարգ գիտնական Արտյուշա Դուկայանին՝ վաստակած հոբելյանի առթիվ, մաղթում քաջառողջություն, նորանոր ձեռքբերումներ, անհոգ ու երջանիկ տարիներ:

Թեմինա Մարության
Բանասիրական գիտությունների թեկնածու, ԳՊՀ գիտական քարտուղար

Հ.Գ.

«Այունյաց երկիր» թերթի խմբագրակազմը միանում է շնորհավորանքին եւ հարգելի Արտյուշա Դուկայանին ցանկանում նորանոր հաջողություններ աշխատանքում, գիտական գործունեություն մեջ եւ անձնական կյանքում:

Սյունիքի մարզում կոռուպցիոն բացահայտված հանցագործությունների քանակը գրեթե 3.5 անգամ ավելացել է



Սյունիքի մարզի դատախազությունում ամփոփվել են 2018 թվականի առաջին կիսամյակի ընթացքում կոռուպցիոն հանցագործությունների դեմ պայքարի արդյունքները: Մարզի վարչական տարածքում մշակված ժամանակահատվածում կոռուպցիոն բնույթի հանցագործությունների դեմ պայքարում հարուցվել է 24 քրեական գործ, 2017 թվականի 1-ին կիսամյակի 7-ի դիմաց:

2018 թվականի 1-ին կիսամյակում երեք գործ հարուցվել է մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազների կողմից, 20-ը՝ հետաքննության, իսկ 1-ը՝ նախքննության մարմինների կողմից: Նշված քրեական գործերում քննությունների լրիվության, բազմակողմանիության ապահովման նպատակով դատախազների կողմից տրվել է անհրաժեշտ քննչական եւ դատավարական այլ գործողություններ կատարելու ուղղված 9 ցուցում:

Նշված քրեական գործերով 16 անձի (մեկ դպրոցի տնօրենի, համայնքի մեկ ղեկավարի, բարձրագույն ուսումնական հաստատության 13 աշխատակցի, սոցիալական ծառայության 1 աշխատակցի) նկատմամբ հարուցվել է քրեական հետապնդում եւ առաջադրվել մեղադրանքներ:

Երկու քրեական գործ չորս անձի վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ ուղարկ-

վել է դատարան: Նշված բնույթի հանցագործություններով դատարանում քննվել է երեք գործ՝ տասը անձի վերաբերյալ: Երկու անձ դատապարտվել է ազատազրկման, յոթը՝ տուգանքի, իսկ մեկն արդարացվել է:

Կոռուպցիոն բնույթի հանցագործությունները, որոնցով հարուցվել են քրեական գործերը, արձանագրվել են կրթության, տեղական ինքնակառավարման, գյուղատնտեսության, սոցիալական ապահովության ոլորտներում:

ՀՀ գլխավոր դատախազության հանրային կապերի բաժին

Առեղծված. Նոր իշխանությունը (հնին հանգույն) չի ուզում գնահատական տալ Վահե անտրենի սյունիքյան գործողություններին

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանին. հաղորդում հանցագործության մասին



Էջ 1

ՀՀ դրամով՝ 41,044,757 ՀՀ դրամից կտրուկ աճելով մինչև 135,911,365 ՀՀ դրամ: Ընդ որում՝ տվյալ ժամանակահատվածում համընդհանուր հայտնի տեղեկություններով վերջինս աշխատել է միաժամանակ երեք ընկերությունում (ինչպես 2016-ին, այնպես էլ դրանից հետո), եւ աշխատանքի ծավալի կամ բարդության եական փոփոխություն տեղի չի ունեցել: Նշված բոլոր ընկերություններն ըստ չստուգված տվյալների՝ պատկանում են կամ ֆինանսավորվում են կամ որեւէ այլ կերպ կապակցված են «Քրոնհիմեթ» ընկերությունների խմբին:

2. 2016թ. հոկտեմբերի 11-ին, այսինքն՝ Վահե Հակոբյանի Սյունիքի մարզպետ նշանակվելուց համարյա անմիջապես հետո, «Քրոնհիմեթ» ընկերությունների խմբի մաս կազմող «Մաքուր երկաթ» ԲԲԸ տնօրեն է նշանակվել նրա եղբայրը՝ Կարեն Հակոբյանը՝ մինչ այդ չգրառեցվելով որեւէ քիչ թե շատ պատասխանատու պաշտոն:

3. Վահե Հակոբյանը մարզպետ եղած ժամանակահատվածում Կապանից Երևան եւ հակառակ ուղղությամբ տեղաշարժվելիս բազմիցս օգտվել է ուղղաթիռից, որի համար վճարել է «Քրոնհիմեթ» ընկերությունների խմբի մաս կազմող «Ձանգեզուրի պղնձամուկիթեմային կոմբինատ» ՓԲԸ-ն: Համաձայն Սյունիքի մարզպետարանից ստացված պարզաբանման՝ Երևանից Կապան եւ հակառակ ուղղություններով ուղղաթիռի թռիչքներն իրականացվում են ՁՄՍԿ-ի պատվերով՝ կոմբինատի աշխատակիցներին տեղափոխելու նպատակով: Աշխատանքային գրաֆիկը համընդհանուր դեպքում մարզպետ Կ. Հակոբյանն օգտվում է ուղղաթիռի՝ ՀՀ Սյունիքի մարզ եւ հակառակ ուղղությամբ չվերթներից: Մինչդեռ ամենավազն սեպտեմբերի 6-ին ուղղաթիռը կանգառ է կատարել քաղաք Սիսիանում այնտեղ նախընտրական գործընթացներին մարզպետի մասնակցության նպատակով: Ավելին, նույնիսկ գրաֆիկի համընդման դեպքում նրան ըստ պաշտոնի փաստացի առավելություն է տրվել: Ուղղաթիռի մեկ ուղղությամբ Երևան-Կապան թռիչքն արժե 750 000 ՀՀ դրամ: Մեր տվյալներով մարզպետն առնվազն 7 անգամ օգտվել է այդ ծառայությունից: Այսինքն, մարզպետին տրամադրվել է առնվազն 5 250 000 ՀՀ դրամ արժեքի ծառայություն:

4. Վահե Հակոբյանը մարզպետ եղած ժամանակահատվածում Սյունիքի մարզում բնակվել է (եւ բնակվում է) «Քրոնհիմեթ» ընկերությունների խմբի մաս կազմող «Ձանգեզուրի պղնձամուկիթեմային կոմբինատ» ՓԲԸ-ին պատկանող պանսիոնատում, որը փակ է հանրության համար: Ամեն դեպքում ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ կատարված հարցումների համաձայն Վահե Հակոբյանը ՀՀ Սյունիքի մարզի Կապան քաղաքի տարածքում չի ունեցել բնակելի անշարժ գույք, ինչպես նաեւ նման գույք չի վարձակալել:

5. «Քրոնհիմեթ» ընկերությունների խումբը Հայաստանում գործունեություն է ծավալում հանքարդյունաբերության ոլորտում, որն անմիջականորեն առնչվում է բնության եւ շրջակա միջավայրի պահպանության հարցերին:

Համաձայն վկայակոչված ժամանակահատվածում գործող «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՀՀ նախագահի Ն-728 հրամանագրի.

«Մարզպետը, օրենսդրությամբ իրեն վերապահված իրավասության սահմաններում, մարզի տարածքում կառավարության տարածքային քաղաքականությունն իրականացնում է հետեւյալ բնագավառներում՝

(...)
- բնության եւ շրջակա միջավայրի պահպանություն»:

Համաձայն «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի՝ վկայակոչված ժամանակահատվածում գործող խմբագրության 23-րդ հոդվածի.

«1. Հանրային ծառայողին եւ բարձրատիժան պաշտոնատար անձին արգելվում է՝

(...)
6) ծառայողական պարտականությունների առնչությամբ այլ անձանցից ստանալ նվերներ, գումարներ կամ ծառայություններ, բացառությամբ սույն օրենքով եւ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերի.

(...):»

Համաձայն նույն օրենքի 29-րդ հոդվածի.
«1. Հանրային ծառայողը կամ բարձրատիժան պաշտոնատար անձը չպետք է ընդունի նվեր կամ այն հետագայում ընդունելու համաձայնություն տա, որը կապված կլինի իր լիազորությունների իրականացման հետ (...):

2. Սույն հոդվածի իմաստով «նվեր» հասկացությունը ենթադրում է ցանկացած գույքային առավելություն, որը ողջամտորեն չէր տրամադրվի պաշտոնատար անձ չհանդիսացող անձի: (...):»

Համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի.

«1. Պաշտոնատար անձի կողմից կաշառք ստանալը, այսինքն՝ պաշտոնատար անձի կողմից անձանք կամ միջոցների միջոցով իր կամ այլ անձի համար դրամ, գույք, գույքի նկատմամբ իրավունք, արժեթղթեր կամ որեւէ այլ առավելություն ստանալը կամ պահանջելը կամ ստանալու խոստումը կամ առաջարկն ընդունելը՝ կաշառք տվող կամ նրա ներկայացրած անձի օգտին պաշտոնատար անձի կողմից իր լիազորությունների շրջանակում որեւէ գործողություն կատարելու կամ չկատարելու կամ իր պաշտոնական դիրքն օգտագործելով այդպիսի գործողություն կատարելու կամ չկատարելու նպատակով կամ ծառայության գծով հովանավորչության կամ թողտվության համար՝

[պատժվում է համապատասխան պատժով]:

(...):»
Վերը նշված փաստերի եւ իրավական նորմերի համադրումը հիմք է տալիս ենթադրելու, որ Վահե Հակոբյանը կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածով նախատեսված արարք, այն է՝ անձանք իր կամ իր կնոջ կամ եղբոր համար «Հանրային ծառայության մասին» օրենքի խախտմամբ ստացել է դրամ, գույք, այլ առավելություններ, իր լիազորությունների շրջանակում, մասնավորապես բնության եւ շրջակա միջավայրի պահպանության ոլորտում, «Քրոնհիմեթ» ընկերությունների խմբում ընդգրկված ընկերությունների օգտին որեւէ գործողություն կատարելու կամ չկատարելու կամ իր պաշտոնական դիրքն օգտագործելով այդպիսի գործողություն կատարելու կամ չկատարելու նպատակով կամ ծառայության գծով հովանավորչության կամ թողտվության համար:

Մինչդեռ ժամանակի համաձայն 23.03.2018թ. ներկայացված հայտարարագրի՝ Վահե Հակոբյանը 2017 թվականին 10 000 դրամով (մոտ 3 000 ԱՄՆ դոլար) մաս-

նաբաժին է գնել հավանաբար Արաբական Միացյալ Էմիրություններում գրանցված ընկերությունում եւ նույն 2017 թվականին այդ ընկերությունից 636 800 դոլար շահաբաժին է ստացել: Մինչդեռ անհավանական է, որ այդքան եկամտաբեր ընկերության մասնաբաժինը գնվել է նման ցածր գնով, ինչը կասկած է առաջացնում, որ հնարավոր է նշված տվյալները ճիշտ չեն արտացոլվել հայտարարագրում կամ Վահե Հակոբյանը նշված մասնաբաժինը որպես կաշառք է ստացել կամ այլ կերպ ապօրինի հարստացել:

Ընդ որում՝ այն հանգամանքը, որ Վահե Հակոբյանը վերը նշված շահաբաժինը ստացել է հենց 2017 թվականին 10 000 դրամով (մոտ 3 000 ԱՄՆ դոլար) գնված մասնաբաժինը՝ բխում է վերջինիս ներկայացրած հայտարարագրից: Մասնավորապես, Վահե Հակոբյանի կողմից 21.10.2016թ. բարձրատիժան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով ներկայացված բարձրատիժան պաշտոնատար անձի պաշտոնական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների եւ փոխկապակցված անձանց հայտարարագրի համաձայն Վահե Հակոբյանը պաշտոնը ստանձնելու օրվա դրությամբ ունեցել է 10 000 ՀՀ դրամի արժեքի բաժնետոմս, իսկ 15.02.2017թ. ներկայացված բարձրատիժան պաշտոնատար անձի 2016 թվականի գույքի, եկամուտների եւ փոխկապակցված անձանց հայտարարագրի համաձայն Վահե Հակոբյանը հարկային տարում արժեթղթեր ձեռք չի բերել: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ համաձայն «Արժուքային կարգավորման եւ արժուքային վերահսկողության մասին» օրենքի կարգավորումների Հայաստանի Հանրապետության տարածքում իրավաբանական անձանց կառավարական եւ բաժնեմեթոդ կապիտալում դրամական (փողային) ներդրումներն իրականացվում են շահաբաժինները վճարվում են Հայաստանի Հանրապետության դրամով, ապա կարող ենք եզրահանգել, որ ՀՀ դրամով բաժնետոմսը Հայաստանի Հանրապետությունում ստեղծված ընկերության բաժնետոմսեր են, իսկ այդ բաժնետոմսերին համապատասխան ստացվող շահաբաժինները եւս պետք է վճարվեն ՀՀ դրամով: Հետեւաբար 636 800 դոլար շահաբաժինը ստացվել է 2017 թվականին 10 000 դրամով (մոտ 3 000 ԱՄՆ դոլար) գնված մասնաբաժինից:

Համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 314.3-րդ հոդվածի.

«1. Հայտարարատու պաշտոնատար անձի, ինչպես նաեւ նրա ընտանիքի կազմի մեջ մտնող անձի կողմից «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված հայտարարագրերում կեղծ տվյալ ներկայացնելը կամ հայտարարագրման ենթակա տվյալը թաքցնելը՝ [պատժվում է համապատասխան պատժով]

2. Նույն արարքը, որը հանգեցրել է առանձնապես խոշոր չափերով գույքի կամ եկամտի չհայտարարագրմանը՝

[պատժվում է համապատասխան պատժով]:»

Համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 310.1-րդ հոդվածի.

«1. Ապօրինի հարստանալը՝ «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված հայտարարագրի ներկայացնելու պարտականություն ունեցող անձի՝ հաշվետու ժամանակահատվածում գույքի ավելացումը եւ (կամ) պարտավորությունների նվազումը, որոնք էականորեն գերազանցում են նրա օրինական եկամուտները եւ ողջամտորեն չեն հիմնավորվում դրանցով, եւ եթե ապօրինի հարստացման համար հիմք հանդիսացող այլ հանցա-

գործության հատկանիշները բացակայում են՝ [պատժվում է համապատասխան պատժով]:

(...):»
Վերը նշված փաստերի եւ իրավական նորմերի համադրումը հիմք է տալիս ենթադրելու, որ Վահե Հակոբյանը կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի 310.1, 311 եւ 314.3 հոդվածներով նախատեսված արարքներ:

Բացի այդ, Վահե Հակոբյանի կինը՝ Էլիզաբեթ Պետրոսյանը, 2016թ. փետրվարի 6-ին գործարար Արտյոմ Արտակի Հաքմիչյանից նվեր է ստացել Երևան քաղաքի Տեյան փողոց, 50 շենք, 22/2 հասցեում գտնվող բնակարանը, ինչը, հաշվի առնելով, որ Վահե Հակոբյանը եւ Էլիզաբեթ Պետրոսյանը նշված ժամանակահատվածում զբաղեցրել են բարձր պաշտոններ առեւտրային կազմակերպություններում, չի բացառվում, որ հանդիսացել է առեւտրային կաշառքի ստացում:

Այսպես, համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 200-րդ հոդվածի.

«3. Առեւտրային կամ այլ կազմակերպության ծառայողի, արբիտրի, այդ թվում՝ օտարերկրյա պետության՝ արբիտրաժի մասին օրենսդրությամբ համապատասխան գործառույթներ իրականացնող արբիտրի, աուդիտորի կամ փաստաբանի կողմից կաշառք ստանալը, այսինքն՝ ապօրինաբար այդ անձանց կողմից անձանք կամ միջոցների միջոցով իրենց կամ այլ անձի համար դրամ, գույք, գույքի նկատմամբ իրավունք, արժեթղթեր կամ որեւէ այլ առավելություն ստանալը կամ պահանջելը կամ ստանալու խոստումը կամ առաջարկն ընդունելը՝ կաշառք տվող կամ նրա ներկայացրած անձի օգտին գործողություններ կատարելու կամ չկատարելու համար

[պատժվում է համապատասխան պատժով]:

(...):»
Վերը նշված փաստերի եւ իրավական նորմի համադրումը հիմք է տալիս ենթադրելու, որ Վահե Հակոբյանը կամ նրա կինը՝ Էլիզաբեթ Պետրոսյանը, կատարել են ՀՀ քրեական օրենսգրքի 200-րդ հոդվածով նախատեսված արարք, այն է՝ անձանք ստացել են գույք, որեւէ գործողություն կատարելու կամ չկատարելու կամ իր պաշտոնական դիրքն օգտագործելով այդպիսի գործողություն կատարելու կամ չկատարելու համար:

Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 176-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի. «Քրեական գործ հարուցելու առիթներն են՝

(...)
2) հանցագործության մասին լրատվության միջոցների հաղորդումները»:
Ելնելով վերոգրյալից եւ հիմք ընդունելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 181-րդ հոդվածի 1-ին կետը, 182-րդ հոդվածի 1-ին մասը՝ խնդրում ենք Ձեր հանձնարարությունը պատկան մարմիններին՝ հարուցելու քրեական գործ:

Ինչո՞ւ ենք այդ մասին Ձեզ դիմում: Բանն այն է, որ «Սյունյաց երկրում» քանիցս հրապարակված այդ տեղեկություններն անտես են արել նախկին իշխանությունները: Որքան էլ զարմանալի է, նոր իշխանության համապատասխան օղակները նույնպես, հին իշխանություններին հանգույն, համառորեն շրջանցում են այդ փաստերը:

Սյունիքյան հանրությունում տարօրինակ այն տպավորությունն է առաջացել, որ նոր իշխանությունները նույնպես չեն ուզում գնահատական տալ Վահե Հակոբյանի սյունիքյան գործողություններին:

Սկա՝ ինչու ենք դիմում Ձեզ:
Հարգանքով՝
Սամվել Ալեքսանյան
27 հուլիսի 2018թ.

Երկնքից մի խոշոր հարկապուռ է իջել Քաջարանում՝ «Արմենիան մայնինգ քոնթրաքթոր»-ը ուղքեր են բաժնետերերը, ինչ գործառույթներ է իրականացնում

Չափազանց հարկապուռների ցուցակը, ինչպես քանիցս ենք նշել, ամեն անգամ հրապարակելուց հետո նորանոր անակնկալներ է մատուցում սյունքներին...

Այդ ցուցակի վերջին 1-2 տարվա եռամսյակային հրապարակումները թեթևակի վերլուծելիս ակնհայտ է դառնում, թե ինչպիսի վերադասավորումներ են տեղի ունեցել մարզի տնտեսությունում:

Դա, անշուշտ, խոսակցության առանձին նյութ է, մանավանդ որ այդ ամենի արդյունքում ոչ միայն սեփականության արմատական վերաբաշխում է կատարվել, այլև կրճատվել են աշխատատեղերը, նվազել է հանքարդյունաբերությունից պետությանը վճարվող հարկերի չափը, առավել սպառնալից է դարձել բնագավառային գործունեությունը:

2018թ. առաջին կիսամյակի ցուցակից երևում է, որ Քաջարանում վերջնականապես ճառագել է մի նոր խոշոր հարկապուռ, որի անունն է «Արմենիան մայնինգ քոնթրաքթոր»:

Այդ նոր «հսկան» ընթացիկ տարվա առաջին կիսամյակում վճարած հարկերի չափով (1.8 մլրդ դրամ) գերազանցում է նույնիսկ Ազարակի պղնձամոլիբդենային կոմբինատին: Սյունիքում գիջում է միայն Ջանգեզուրի պղնձամոլիբդենային և Կապանի լեռնահարստացման կոմբինատներին:

Առաջին հայացքից հաճելի նորույթ է եմ միայնց աչքալուսանք տալու առիթ, սակայն...

Ի՞նչ ընկերություն է դա, ինչպե՞ս ստացվեց, որ մեկ-երկու տարվա ընթացքում առաջատար դեր գրավեց հայաստանյան հանքարդյունաբերության մեջ՝ չափազործելով որևէ հանքավայր:

Եվ եթե այդքան հզոր է ու կարելու, ապա ինչո՞ւ որևէ էական տվյալ չի հրապարակվում այդ ընկերության մասին (բացի վճարված հարկերից), ինչպես գործող օրենսդրությունն է պահանջում:

Ըստ մեր ուսումնասիրությունների՝ «Արմենիան մայնինգ քոնթրաքթոր» ՍՊ ընկերությունը խոշոր հարկ վճարողների շարքում է 2016-ից:

Ըստ ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պե-

տական ռեգիստրի տվյալների՝ գրանցվել է 2015-ի կեսերին:

Ընկերության գտնվելու վայրը Քաջարանն է:

Դատելով անվանումից՝ հանքարդյունաբերության ոլորտի ձեռնարկություն է:

Ընկերության պաշտոնական կայքում, սակայն, նշված չէ, թե ինչո՞վ է զբաղվում, ի՞նչ ապրանքներ է արտադրում կամ ի՞նչ ծառայություններ է մատուցում, ուղքեր են բաժնետերերը:



Ոմանք էլ զարմացան՝ մի՞թե նման խոշոր ընկերություն կա Քաջարանում:

Որոշներն էլ տեղեկացրին, թե այդ ընկերությունը հիմնվել է 2015-ին՝ գաղութարարների կողմից՝ Քաջարանի կոմբինատի արտադրական միջոցների մի մասը (հատկապես մեքենա սարքավորումները՝ բացի «Բելազ» մեքենաներից) մի քանի հոգու «վաճառելու» արդյունքում, ինչին անտեղյակ են եղել նույնիսկ կոմբինատի բաժնետերերը:

Եվ այդպես երկու-երեք հոգի դարձել են



Նշված չէ նաեւ ընկերության արտադրական-տեխնիկական որևէ ցուցանիշ:

Պետական եկամուտների կոմիտեի տեղեկագրերից իմանում ենք միայն, որ տարեկան մոտ 1 մլրդ դրամ աշխատավարձի ֆոնդ ունեցող ընկերությունը 2016-ի հունվար-դեկտեմբերին վճարել է 988.3 մլն դրամ հարկ, 2017-ի հունվար-դեկտեմբերին՝ 2 մլրդ 128 մլն դրամ հարկ, 2018-ի 1-ին եռամսյակում՝ 855.6 մլն դրամ, 2018-ի 2-րդ եռամսյակում՝ մոտ 1 մլրդ դրամ հարկ:

Փորձեցինք Քաջարանում եւս որոշ տեղեկություններ ստանալ այդ ընկերության մասին, չէ՞ որ հենց Քաջարանն է այդ ընկերության եւ՝ գրանցման, եւ՝ գործունեության վայրը:

Մի քանի քաջարանցի խոսակցից միայն պարզացավ գրուցել մեզ հետ՝ ասելով, թե դա վտանգավոր թեմա է:

Քաջարանի կոմբինատի սեփականության մի մասի տերը. հորինված այդ ընկերության բաժնետերերի անունները հայտնի չեն:

Այնուհետեւ Քաջարանի կոմբինատը սկսել է իր երբեմնի սեփական մեքենասարքավորումները (որ մինչ այդ օգտագործում էր անվճար) օգտագործել վճարովի հիմունքներով...

Ահա այդպես էլ, ըստ քաջարանցիների, ծնվել է «Արմենիան մայնինգ քոնթրաքթոր» ՍՊ ընկերությունը՝ հայաստանյան հանքարդյունաբերության ոլորտում:

Հիմա այն հարցերը, որ հետաքրքրում են սյունքիցներին:

Ինչպե՞ս են ի՞նչ բազայի վրա է հիմնվել այդ ընկերությունը:

Ուղքեր են այդ ընկերության բաժնետերերը:

Ի՞նչ նկատառումներով է հիմնվել ընկերու-

թյունը, չէ՞ որ նույն մեքենասարքավորումներն առանց վճարի ծառայում էին կոմբինատին՝ լիցենզի վերջինիս սեփականությունը:

Իսկապե՞ս կոմբինատի բաժնետերերը չեն իմացել, որ իրենց պատկանող ընկերության ունեցվածքի մի մասն օտարվում է անհայտ մարդկանց եւ հետագայում եւս պետք է կոմբինատին ծառայի, բայց՝ վճարովի հիմունքով: Ի՞նչ ապրանքներ է արտադրում կամ ի՞նչ ծառայություններ է մատուցում այդ ընկերությունը:

Ո՞վ էր կամ ո՞վ է ընկերության տնօրենը:

Ի դեպ, նախկին տնօրենի ուլ լիցենզի մասին Քաջարանում իրարամերժ տեղեկություններ են շրջանառվում, իսկ ավելի շատ տրվում է ԱԼԾ-ի նախկին բարձրաստիճան պաշտոնյա, ինչ-որ ՕՏԻԿ Գասպարյանի անուն, ով, իբր, նախկինում եղել է Վահե Չակոբյանի ղեկավարը, ով, իբր, ս.թ. ապրիլ-մայիսյան հայտնի իրադարձությունների ժամանակ կամավոր հեռացել է Սյունիքից՝ հնարավոր անախտություններից եւ հետեւանքներից խոսակցիչու համար՝ հայտարարելով, որ այդ գործից վատ հոտ է զալիս:

Անշուշտ, բոլոր այդ խոսակցությունները չէին լինի, եթե գործող օրենքի համաձայն պատշաճ կարգով, տեղեկություններ հրապարակվեին ընկերության մասին: Այնպես որ՝ շրջանառվող խոսակցությունները ճշտման, ստուգման կարիք ունեն: Եվ դա բնական է, չէ՞ որ խոսքը մեր երկրամասում գործող հանքարդյունաբերական ինչ-որ «հսկա» ձեռնարկության մասին է, որի վերաբերյալ, սակայն, բոլոր հիմնական տեղեկություններն առայժմ թաքցվում են, որի գործունեությանը ծանոթ չեն անգամ գրանցման եւ գործունեության վայրի հարեւանները:

Իսկ միգուցե Հայաստանի Հանրապետության կառավարությունը սյունքիցներին տեղեկացնի, թե երկնքից այդ ի՞նչ խոշոր հարկապուռ է երկու տարի առաջ վայրէջք կատարել Քաջարանում:

ՍԱՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ԶՊՄԿ-ի համար ցանկանում են փոխել Քաջարանի 339 հեկտար հողերի կապեգործիաները

էջ 1 - խոստարներ, անտառներ, բնակելի կառուցապատման, ընդհանուր օգտագործման եւ այլ հողեր:

Լեռնաձոր գյուղում էլ պիտի փոխվեն 31 հա պետական սեփականության հողերի գյուղատնտեսական, անտառային, ջրային կատեգորիաները: Այդ հողերի մեջ կան արոտներ ու անտառներ:

Ընդհանուր 339 հա մակերեսով այս հողերը տեղափոխվելու են արդյունաբերության, ընդերքօգտագործման եւ այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի կատեգորիա, իսկ ավելի կոնկրետ՝ դասվելու են արդյունաբերական օբյեկտների հողերի շարքին: Սա մոտավոր պատկերացում է տալիս, թե ինչ նպատակի են ծառայելու ԶՊՄԿ-ին հատկացվելիք հողերը:

Ի՞նչ է նախատեսվում կատարել այս տարածքներում

Քաջարանի համայնքապետ Մանվել Փարամազյանին գրավոր հարցում էինք ուղարկել հողերի կատեգորիայի փոփոխության մասին: Նա հայտնել է, որ ավագանու որոշման համար հինգ է ծառայել 2 փաստաթուղթ՝ կառավարության 2011 թ. 1918-Ն որոշումն ու Էներգետիկայի եւ բնական պաշարների նախարարության կողմից դեռ 2012-ին ԶՊՄԿ-ին տրված լեռնահարստացման ակտը:

Այս ակտն օգտակար համաձայնեցողի համալիրի տեղադրման նպատա-

կով ընդերքի տեղամասի եզրակետերի կորդինատներն ամրագրող փաստաթուղթ է, որն ընդերքօգտագործման իրավունքի անբաժանելի մաս է: ԶՊՄԿ-ին տրված ակտում վերջին անգամ փոփոխություն կատարվել է 2016-ի դեկտեմբերին: Քաջարանի ղեկավարի տեղեկացմամբ՝ նշված հողամասերը, որոնց մասին որոշում է կայացրել ավագանին, սահմանված են այդ ակտով:

Մյուս կողմից՝ կառավարության 1918-Ն որոշումը սահմանում է, թե ինչպես պիտի կատարվի հողերի կատեգորիայի փոփոխությունը այն համայնքներում, որոնք չունեն հաստատված գլխավոր հատակագիծ: Ըստ այդմ՝ հողամասի սեփականության կամ օգտագործման իրավունք ունեցող անձը (տվյալ դեպքում՝ ԶՊՄԿ-ն) դիմում է համայնքի ղեկավարին, վերջինս կազմում է հողաշինարարական գործ, այնուհետ համայնքապետը փաստաթղթերը հանձնում է մարզպետին, նյութերը քննարկվում են մարզային հանձնաժողովում, ապա ուղարկվում տարածքային կառավարման եւ զարգացման նախարարություն, որն էլ հանձնում է միջգերատեսչական հանձնաժողովին: Վերջինս տալիս է դրական կամ բացասական եզրակացություն: Այնուհետ հողաշինարարական գործն ու եզրակացությունը մարզպետի միջոցով հանձնվում են համայնքապետին: Դրական եզրակացության դեպքում համայնքի ղեկավարը հողամասի կատեգորիան փոխելու որոշման նախագիծ է ներկայացնում ավագանին: Ահա այս ամենից կատարվել է առաջին քայլը՝ Քաջարանի ավագանին համաձայնել է հողերի կատեգորիայի փոփոխություններին եւ համայնքապետին հանձնարարել կազմել հողեր (այդ պարագայում կարելի էր ասել, որ ԶՊՄԿ-ն նշված տարածքներում հանք է բացելու), այլ արդյունաբերական օբյեկտների հողեր, հետեւաբար Մանվել Փարամազյանին հարցրել էինք, թե ինչ տիպի գործունեություն է նախատեսվում իրականացնել այդ տարածքներում: Պատասխանն ընդհանրական է. «Հիշյալ տարածքներում միմիայն կարող է իրականացվել լիցենզավորված եւ օրենքով չարգելված գործունեություն»: Հեռախոսագրույցի ընթացքում էլ Քաջարանի ղեկավարը հերքեց, թե այդ հողերում հնարավոր է, որ ԶՊՄԿ-ն նոր պոչամբար կառուցի:

Լեռնաձոր գյուղի վարչական ներկայացուցիչ Ստեփան Պետրոսյանն էլ մեզ հայտնեց, թե տեղյակ է ավագանու որոշման մասին, բայց այդ

օրերին Քաջարանում չի եղել: Նրա տեղեկացմամբ՝ որոշման մեջ նշված Լեռնաձորի հողերը ընդգրկում են նախկին Գիրաթաղ բնակավայրի տարածքը, որտեղ 1989-90 թվականներից հետո բնակություն չկա, եւ, ըստ Ս. Պետրոսյանի, ավերված տարածք է: Ըստ Պողոսյանի՝ այդ տեղ ԶՊՄԿ-ն նախատեսում էր բնակելի շենքեր կառուցել: Մեր գրուցակցի տեղեկություններով՝ ծրագրի մեկնարկը նախատեսվում է 2019-ից, նախագծային ինչ-որ աշխատանքներ կատարվել են:

Սակայն համայնքապետ Մանվել Փարամազյանը հերքեց Գիրաթաղում արդյունաբերական գործունեություն սկսելու լուրը՝ հավելելով, որ այնտեղ սպասվելիք բնակարանաշինական ծրագիրը չի կատարվել համայնքապետարանը կոմբինատի ֆինանսական աջակցությամբ բնակարաններ է կառուցելու երկուսսարդ ընտանիքների համար: Ծրագրի ժամկետները, ըստ Փարամազյանի, առայժմ հայտնի չեն:

Քաջարանի համայնքապետին նաեւ հարցրել էինք, թե 2016-2018 թթ. համայնքը, այդ թվում՝ խոշորացումից հետո դրա մեջ մտած բնակավայրերը, որքան ֆինանսական կամ այլ տիպի աջակցություն են ստացել ԶՊՄԿ-ից: Հիշեցնեց, որ 2017 թ. Քաջարան քաղաքին են միացել Նոր Աստղաբերդ, Գեղի, Լեռնաձոր, Քաջարան գյուղական համայնքները՝ ձեւավորելով մեկ համայնք՝ Քաջարան կենտրոնով:

Ս. Փարամազյանը նշել է, որ 2016-ին Քաջարան քաղաքը ԶՊՄԿ-ից ստացել է 10 միլիոն դրամ, 2017-ին՝ շուրջ 109 միլիոն, իսկ 2018-ի անցած ժամանակահատվածում՝ մոտ 64 միլիոն: Լեռնաձորն իր հերթին 2016 եւ 2017 թթ. ստացել է 5 միլիոնական դրամ: 2017-ին էլ ԶՊՄԿ-ն 150 հազար դրամ է հատկացրել Նոր Աստղաբերդին:

Հիշեցնեց, որ 2011 թ. Տիգրան Սարգսյանի կառավարությունը որոշեց Սյունիքի մարզի Քաջարան, Արծվանիկ, Սեւաքար, Աճանան, Չափնի եւ Սյունիք գյուղական համայնքների 608 հա հողերի (համայնքներին եւ քաղաքացիներին սեփականության իրավունքով պատկանող) նկատմամբ ճանաչել բացառիկ գերակա հանրային շահ, վերցնել դրանք սեփականատերերից, փոխել կատեգորիան՝ դարձնելով արդյունաբերության, ընդերքօգտագործման եւ այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր, ու վարձակալությամբ հանձնել ԶՊՄԿ-ին՝ հանքավայրի շահագործման նպատակով:

Այս որոշումը մեծ բողոքի ալիք բարձրացրեց նշված համայնքներում, մասնավորապես՝ Քաջարան գյուղում, որտեղ «գերակա հանրային շահի» տակ էր հայտնվել նույնիսկ գյուղի գերեզմանոցը:

Սյունիքի առաջին մարզպետ Սուրեն Աբրահամյանը եւ Իտալիայում ԶԶ արտակարգ ու լիազոր դեսպան Վիկտորիա Բաղդասարյանը՝ Սյունիքում



Օգոստոսի 6-ին մեր երկրամաս էին այցելել Սյունիքի առաջին մարզպետ, գեներալ-մայոր Սուրեն Աբրահամյանը եւ Իտալիայի Զանգեզուրի մարզային շրջանային ԶԶ-րապետության արտակարգ ու լիազոր դեսպան Վիկտորիա Բաղդասարյանը՝ ընտանիքներով:

Թեև այցը մասնավոր էր, Սուրեն Աբրահամյանը հետաքրքրվել է Սյունիքում ընթացող գործընթացներով: Ի դեպ, 1998 թվականին երեւանի քաղաքապետ

ընտրվելուց եւ Սյունիքի տեղափոխվելուց հետո նա երբեք չէր դադարեցրել իր առնչությունները մեր լեռնաշխարհի հետ. եւ դա բնական է, քանզի Արցախյան պատերազմի դժվարին ու վճռորոշ ժամանակներում էր՝ 1993 թվականին, որ իր ճակատագիրը կապեց Սյունիքի հետ:

Իսկ դեսպան Վիկտորիա Բաղդասարյանի համար այցը նախնական ճանաչողական էր: Ըստ նրա՝ Սյունիքը՝ պատշաճ ներկայացնելու պարագայում, կարող է գրավիչ լինել իտալացի զբոսաշրջիկների համար:

Սյունիքյան այցը նաեւ յուրօրինակ ուխտագնացություն էր Տաթևի աստվածասկիզբ սրբարան, որն ամեն հայի համար, իրոք, Երևանի վայր է. կիրակի այդ օրն ուխտավորների չդադարող հոսքը դրա եւս մեկ ու վառ վկայությունն է:

Ամեն ինչից զատ տպավորիչ էր վանքի տարածքում կատարվող վերականգնողական աշխատանքների ընթացքը, որն իրականացնում է ճանաչված շինարար Մարատ Ասլանյանի գլխավորած շինարարական կազմակերպությունը. արդեն ավարտվել է Սուրբ Աստվածածին եկեղեցու գմբեթի վերաշինումը:

Սուրեն Աբրահամյանին եւ Վիկտորիա Բաղդասարյանին ընկերակցում էր «Այուրյաց երկիր» թերթի խմբագիր Սամվել Ալեքսանյանը:

«Այուրյաց երկիր»

Հանրային քննարկումն այս անգամ եւս փառալույծ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եւ փորձաքննության մասին» ՀՀ օրենքի, ինչպես նաեւ ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված կարգով հուլիսի 26-ին ժամը 15:00-ին, Կապանի համայնքապետարանի նիստերի դահլիճում նշանակվել էր «Արարատցեմենտ» ՓԲ ընկերության կողմից ներկայացված՝ Կապան քաղաքում նախատեսվող թիվ երկու ցեմենտի աղացման արտադրամասի կառուցման աշխատանքային նախագծի շրջակա միջավայրի ազդեցության գնահատման հայտի վերաբերյալ հանրային քննարկումների երրորդ փուլը: Բայց այս քննարկումն արժանացավ նախորդի (հունիսի 27-ին տեղի ունեցած) ճակատագրին: Ժամը 15:00-ին նշանակված նիստից որոշ ժամանակ առաջ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության անդամները, բնապահպաններ, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, պարզապես այդ հիմնախնդրով մտահոգ մարդիկ շրջափակել էին համայնքապետարանի դահլիճի դուռը՝ հնարավորություն չտալով ոչ մեկին մտնել այնտեղ:

Սինչ այդ համայնքապետարանի բակում «Արարատցեմենտ» ՓԲ ընկերության ներկայացուցիչները փորձում էին ընդհանուր լեզու գտնել բողոքավորների հետ եւ անցկացնել հանրային քննարկումը՝ պարտավորվելով պատասխանել նրանց հետաքրքրող բոլոր հարցերին: Բայց ապարդյուն:

-Ցեմենտի արտադրամասի հիմնման խնդրով պիտի հանրաքվե անցկացվի, - այսպիսին է բողոքավորների տեսակետը: Հրահրատ ԾՐԲԵՆԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Կապանի N2 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ը հայտարարում է տարածքի վարձակալության մրցույթ՝ աշակերտների որակյալ սննդի ապահովման (բուֆետի կազմակերպում) նպատակով: Մրցույթը տեղի կունենա 2018թ. օգոստոսի 27-ին, ժամը 14:00-ին:

Հայտերը ներկայացնել մինչեւ օգոստոսի 24-ը, ժամը 16:00: Տեղեկությունների համար զանգահարել 0285-2-48-79, 093-62-74-04 հեռախոսահամարներով:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԳՆ «Սիսիանի ավագ դպրոց» ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ 2018-2019 ուստարվա ընթացքում աշակերտների որակյալ սննդի եւ դրա պատշաճ ու ժամանակին սպասարկումը ապահովելու համար (բուֆետի կազմակերպում):

Մրցույթը տեղի կունենա օգոստոսի 24-ին ժամը 14:00, ք. Սիսիան, Մյասնիկյան 8: Մանրամասների համար զանգահարել 077 38 28 65

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ ՀՀ Սյունիքի մարզի «Կապանի արվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի երգչախմբավարություն, գեղանկարչություն եւ դիզայն մասնագիտությունների դասախոսների թափուր տեղերի համար:

Տեղեկությունների համար զանգահարել 028524891, 077026320 Մրցույթը տեղի կունենա ս/թ օգոստոսի 31-ին, ժամը 11:00-ին:

Զանգեզուրի պղնձամուլիբդենային կոմբինատի հայտարարությունը խորացնում է կասկածները

Պատկան մարմինների ուշադրության ենք ներկայացնում Զանգեզուրի պղնձամուլիբդենային կոմբինատի հայտարարությունը (27/07/18), եւ խնդրում ենք պարզել՝ հատկապես ինչ տեղեկատվության է տիրապետում ԶՊՄԿ-ն՝ «Ջերմուկում ստեղծված իրավիճակ» հայտարարելով: «Լիդիան Արմենիան» պահանջում է քննությամբ պարզել ԶՊՄԿ-ի հայտարարության մեջ ակնարկված «իրավիճակը» ինչպես է ստեղծվել՝ ուն նախածնունդային ու ֆինանսավորման, եւ հատկապես պարզել այդ «իրավիճակի» ստեղծման գործում ԶՊՄԿ-ի հնարավոր ներգրավվածությունը եւ հետեւաբար՝ շահագրգռվածության շարժառիթները:

Հիշեցնենք, որ տեսանյութում բացահայտ երեւում է, որ ԶՊՄԿ-ին պատկանող ծառայողական մեքենայի թափքից սնունդ է մատակարարվում Ամուլսարի ճանապարհների ապօրինի փակած անձանց, ինչ վերաբերյալ «Լիդիան Արմենիան» ընկերությունը տարածել է հաղորդագրություն (26/07/18): ԶՊՄԿ-ի պատասխան հաղորդագրության մեջ կասկածելի վստահությամբ շեշտվում է, թե «Լիդիան Արմենիան» ընկերությունը բացարձակ չի տիրապետում Ջերմուկում ստեղծված իրավիճակին»՝ միանշանակ տպավորություն է ստեղծելով, որ ԶՊՄԿ-ն «Լիդիան Արմենիայից» ավելի լավ է «տիրապետում Ջերմուկի իրավիճակին», ինչը եւ հիմք է կասկածների համար:

Գ.Գ. Ստորեւ ներկայացնում ենք

«Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲԸ-ի պարզաբանումը, որը հիմք է հանդիսացել «Լիդիան Արմենիայի» վերը բերված հայտարարությանը: «Երեկ» հուլիսի 26-ին, «Լիդիան Արմենիան» ընկերության կողմից տարածվել է տեսանյութ, որում երեւում է, թե ինչպես է «Զանգեզուրի պղնձամուլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության աշխատակիցը՝ գտնվելով Ջերմուկում, ԶՊՄԿ-ի սեփականություն հանդիսացող ավտոմեքենայով: Գնդվազ-Ջերմուկ ավտոճանապարհին Վահանը հանդիպել է Լուսինեի եղբորը՝ Գեւորգ Հովհաննիսյանին՝ ծնված 01.12.1984-ին, որը նշված տարածքից ոչ հեռու ուղի 12 հեկտար ծիրանի այգի: Գեւորգը Վահանին է փոխանցել մի քանի տոպրակ ծիրան, ինչը եւ ֆիքսվել է «Լիդիան Արմենիան»-ի ներկայացրած տեսանյութում եւ ստացել խիստ անտրամաբանական մեկնաբանություն ընկերության կողմից:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշված զրպարտությունը տեղ է գտել մի քանի լրատվական կայքերում, հարկ ենք համարում ներկայացնել եղելությունը: Այսպիսով, ԶՊՄԿ աշխատակից Վահան Գրիգորյանը՝ ծնված 01.05.1984-ին, լինելով արձակուրդում, մեկնել է Ջերմուկ, որտեղ այդ պահին գտնվել է նրա կինը՝ Լուսինե Հովհաննիսյանը՝ ծնված 01.02.1989, որը ծնունդով Ջերմուկից է եւ ացելելիս է եղել քաղաք

Ջերմուկի Շամշյան 11 ա հասցեում բնակվող իր ծնողներին՝ Զավեն եւ Էմմա Հովհաննիսյաններին: Վահան Գրիգորյանը Ջերմուկ է մեկնել իր տնօրինման տակ գտնվող՝ ԶՊՄԿ-ի սեփականություն հանդիսացող ավտոմեքենայով: Գնդվազ-Ջերմուկ ավտոճանապարհին Վահանը հանդիպել է Լուսինեի եղբորը՝ Գեւորգ Հովհաննիսյանին՝ ծնված 01.12.1984-ին, որը նշված տարածքից ոչ հեռու ուղի 12 հեկտար ծիրանի այգի: Գեւորգը Վահանին է փոխանցել մի քանի տոպրակ ծիրան, ինչը եւ ֆիքսվել է «Լիդիան Արմենիան»-ի ներկայացրած տեսանյութում եւ ստացել խիստ անտրամաբանական մեկնաբանություն ընկերության կողմից:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Լիդիան Արմենիան»-ի հայտարարությունը ստվեր է գցում «Զանգեզուրի պղնձամուլիբդենային կոմբինատ»-ի բարի համբավի վրա, խնդրում ենք պատկան մարմիններին՝ մանրամասնորեն քննել այս դեպքը եւ պատասխանատվության ենթարկել զրպարտող նյութի հեղինակներին: Մենք պատրաստ ենք տրամադրել դեպքին առնչվող ցանկացած մանրամասներ:

Այս միջադեպը, ցավոք, ցույց է տալիս, որ «Լիդիան Արմենիան» ընկերությունը բացարձակ չի տիրապետում Ջերմուկում ստեղծված իրավիճակին, չի գիտակցում նման անպատասխանատու վարքագծի անխուսափելի հետեւանքներն ու դրանց ողջ ծանրությունը:

Այուրյաց երկիր
Հիմնադիր ԵՎ ՀՐԱՏԱՐԱՐՎԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՄԱՐԿԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՊՆՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ՝ ՍՍՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Գրանցման վկայականը՝ 01U 000231:
Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: